

N332

Сюжет 344

ՀԿ (Բ) ԿԿԿ ԲԱՆ.-ԳԵՂՋՎՈՒՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 10

# ԾՐԱԳԻՐ

ԳԵՂՋՎՈՒՅՈՒ ՊԱՏԳԱՍՏՎՈՐՎԱՆ  
ԺՈՂՈՎՆԵՐԻ

ՀԱՅՈՒԹԱ  
ՔՈՏՈՎԵԴԵՆԻ  
Պատգաման Խուն  
СССР

396(47)  
5 - 89

ՅԵՐԵՎԱՆ

1926

~~Ա332~~

0120-10  
Հ 120-10  
N 10.

ՀԿ (Բ) ԿԿ ԲԱՆ.-ԳԵՂԶԿՈՒՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 10.

Հ 396(47)  
Հ 1329 օ-89



ՅԵՐԵՎԱՆ

1926

14.05.2013

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՅԵՐԿՏՈՂ

Գեղջկուհիների պատգամավորական ժողովների  
ծրագրի առթիվ

1926—27 թվի պատգամավորական ժողովների  
ծրագիրը՝ Հիմնվելով անցյալի փորձառության  
վրա վերակազմված է: Հենց այս տեսակետից ել  
պատգամավորական ժողովների այս տարվա ծրա-  
գիրը խորհրդային բոլոր միություններում միատե-  
սակ է կազմված:

Ծրագրի վերակադրման գլխավոր պատճառը  
յեղել է այն, վոր գեղջկուհիներին ելավելի կա-  
պել գյուղի գործնական խնդիրների հետ, վե-  
րացնելու չամար այն բոլոր դժվարութուններն ու  
խնդիրները, վոր գրգում են գեղջկուհու առաջ  
գործնական աշխատանքի ընթացքում: Պատգամա-  
վորական ժողովները ըլինեն միայն կոմունիզմի  
դպրոց, այլ գտննան մասսային կապող կյանքի  
հետ:

Ծրագրին արված է գյուղատնտեսական թե-  
քում և ամեն մի զրույց կապվում է գործնական  
աշխատանքների հետ:

- Ամբողջ նյութը բաժանվում է 4 մասերի.
- 1. Խորհրդային շինարարություն.
- 2. Տնտեսական շինարարություն.

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ	ԹԱՏՎԵՐ 525.
ԳՐԱՓ. 850 Բ.,	ՏԻՐԱԳ. 700.



58903-67

3. Կուսակցական խնդիրներ.

4. Կենցաղային հարցեր.

Ծրագրի առաջին մասում դբված ե «խորհրդատին շինարարություն» նյութ՝ բաղկացած չորս գրույցներով, վորոնց մեջ ամփոփված են այն բոլոր խնդիրները, վոր հանդիպում է մեր գեղջկուհին իր առորյա աշխատանքների ընթացքում։ Այս այս հարցերի ճիշտ լուսաբանումից հետո միայն գեղջկուհին կարող է մասնակցել տեղական խորհրդների աշխատանքին։

«Խորհրդային շինարարություն» նյութը նպատակ ունի բացատրել գեղջկուհիներին այն բոլոր իրավունքները, վոր տվել են նրան Հոկտեմբերյան հեղափոխությունը, ինչպես նաև բացատրել բոլոր այն գժվարությունները, վոր գեռես կանգնած են նրա առաջ։ Այս նյութի նպատակը կայանում է նրանում, վոր պատգամավորուհու մեջ զարդացնի ակտիվությունը և ինքնազործունեությունը, իր իրավունքներն ու պարտականությունները սպառգործելու նպատակնվ։

Ծրագրի յերկրորդ նյութն է «խորհրդային իշխանության կառուցվածքը», սկսած դյուդիսորհուրդներից մինչ Կենարոնական Գործադիր Կոմիտեն։ Յերկրորդ նյութի նպատակն է բացատրել գեղջկուհուն խորհրդային իշխանության ձեի և եյության մասին, պրոլետարիատի դեկավար դերը բանվորագյուղացիական Միության մեջ, և կու-

սակցության դեկավար դերը խորհրդային իշխանության շինարարության մեջ։ Այս բոլորը գիտենալով պատգամավորուհին պատասխանատվություն կզգա գյուղառիչի աշխատանքների նկատմամբ, վոր վոչ միայն հարկավոր ե քննադատել, այլ հարկավոր ե ակտիվ կերպով աշխատել և վերացել բոլոր յեղած թերությունները։

Յերրորդ նյութն է. «Մեր բյուջեն և հարկային սիստեմը»։ Այս նյութը պետք է հետաքրքրի գեղջկուհուն ու նա անմիջապես մասնակցի Եյուղխորհըրդի բյուջեն աշխատանքներին։

Ծրագրի առաջին մասի բարդ նյութը՝ դուցեազգային հարցն է։ Այս նյութը անցնելիս դեկավարները պետք է զգույշ և մտածված տանեն պարագմունքը և այդ չպետք ե անցնեն վերացական կերպով։ Նյութը անցնելիս պետք է աշխատել յերեան բերել այն հիվանդագին կողմերը, վոր գոյություն ունեն տվյալ շրջանում՝ հասկացնելով գեղջկուհուն թե վորտեղից են առաջանում աղոյայնական զարգմունքներն ու ազգամիջյան թրչնամությունները։

Ծրագրի յերկրորդ մասը «տնտեսական շինարարություն» նյութն է, վոր բաղկացած է յերեք մասերից։ Առաջինն է դյուդատնտեսությունը, վոր անցնելիս պիտի աշխատել գեղջկուհու մեջ զարթեցնել ակտիվություն, բարձրացնելու գյուղական անտեսությունը։ Նյութն անցնելիս գեղջկուհին

լրիվ պատկերացում պիտի ունենա գյուղում առաջացող շերտավորման մասին և կուսակցության վերաբերմունքը գեղի գյուղի յուրաքանչյուր շերտը։ Պատգամավորուհին պետք է հասկանա, վոր պրոլետարիատի նեցուկը գյուղում բատրակն ու չքավորն են, վորոնք գաշնակցելով միջակների հետ անջատեն վերջինիս կուրակի ազգեցությունից։

Յերկրորդ նյութն ե «արգյունաբերությունը», վորը անցնելիս պարզ որինակներով պետք է բացատրել գեղջկուհիներին բոլոր այն գժվարությունները ու աճնրաժեշտությունը, վոր դրված են ներկայումս յերկրի խոչոր մեքենայացման-արդյունացման (ինդուստրալիզացիա) և խորհրդային սոցիալիստական հանրապետություններում անտեսական անկախություն ստեղծելու սոցիալիզմի շինարարության համար։

Այս մասի յերրորդ նյութն ե «կոռապերացիան», վորը անցնելիս պատզամավորուհին վո՛չ միայն պիտի աշխատի բացատրել կոռապերացիայի անսահմանը ու աճնրաժեշտությունը, այլ պիտի մասնանշի կոռապերացիայի թերությունները և իր անմիջական մասնակցությամբ վերացնի նրանց։

Ծրագրի յերրորդ կետը նվիրված է կուսակցության։ Այս առթիվ վերցրված են վորոշ խնդիրներ—կուսակցության զեկավար գերը բանվորուգյուղացիական միության գործում—բանվորություն, գեղջկուհու, կոմյերիտմիության և պիտիներ-

ների մասին։ Ծրագրի մեջ կուսակցական խնդիրներ մտցնելու նպատակն է բացատրել գեղջկուհուն կուսակցության զեկավար գերը խորհրդային յերկրի շինարարության մեջ։ Այս տեսակետից առաջարված են կոնկրետ խնդիրներ, վորոնք կը հրահրեն գեղջկուհուն ակտիվ կերպով ոգնել կուսակցության՝ իրադորձելով իր առաջ դրված խնդիրները։

Ծրագրի վերջին մասը—կենցաղի խնդիրն է գյուղում։ այս հարցը նոր է. մեր հին ծրագրերի մեջ նման հարցեր չեն յեղել։ Կյանքի փորձառությունը ցույց տվեց, վոր այս խնդիրը մեծ հետաքրքրություն է առաջացրել գյուղում և կարեոր նշանակություն ունի մեզ համար։

Կենցաղի խնդիրը մտցնելով ծրագրի մեջ՝ մենք նպատակ ենք ունեցել պատզամավորուհուն դարձնել նոր կենցաղի ջատագով։

Վոր նա հիմնագիրն ու կազմակերպողը լինի յերեխաներին նոր վորով դաստիարակելու, աշխատելով մոր և մանկան պաշտպանության գործում, հրահրել գեղջկուհիներին բանալու մանկական հրապարակներ, մանկապարտեղներ, հետեւ գյուղի մաքրության ու սանիտարական աշխատանքներին, վոր նա ոգնի կոմսոմոլին ու պիտներին աշխատանք տանելու գյուղում։ մի խոսքով գործով դորձն մասնակցություն ցույց տա գյուղի կուլտուրական աշխատանքներին։

Ծրագիրը անցնելու ընթացքում, պետք է անպայման կապել և գործնական խնդիրներ, պատգամավորական ժողովների զեկավարները նյութը անցնելիս թեորիայի հետ կապեն գործնական խընդիրներ և պետք է հետեւն նաև այդ գործնական խնդիրների կիրառմանը, կովի նախապաշտումների ու հին սովորությունների գեմ:

Յուրաքանչյուր նյութ անցնելիս, պետք է աշխատել տալ զրույցի բնույթ, հարց ու պատասխանի ձևով:

Ծրագրին կցված է գրականության մի ցուցակ զեկավարների համար. մատնանշված բոլոր ձեռնարկները լրացնում են իրար:

Հ. Կ. (ր.) Կ. Կ. Բանգեղջրաժին.

## ԵՐԱԳՐԻ ՍԻԵՄՈ

### ԳԵՂԱԿՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

#### 1. ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4 ՆՅՈՒԹ)

- Գեղջկուհու դրությունը ԽՍՀՄ-ում.
- Ի՞նչ է խորհրդային իշխանությունը.
- Շրջանային գավառարկով և հարկերը.
- Մեր յերկրում չկան ճնշված ժողովուրդներ.

#### 2. ՏՆՏԵՍՎԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3 ՆՅՈՒԹ)

- Գյուղատնտեսություն.
- Արդյունաբերություն.
- Կոռպերացիա.

#### 3. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՋՆՈՐԴԸ ՀԱՄ. ԿՈՄԿՈՒՍՆ Ե (3 ՆՅՈՒԹ)

- Կոմկուսակցությունը դեկավարում է բանվոր դասակարգի ու զյուղացիության միությունը.
- Լենինը բանվորուհու և գեղջկուհու մասին.
- Ովքե՞ր են կոմյերիտականները և պիոներները.

#### 4. ՆՈՐ ԿԵՆՅԱՆԵ ԳՅՈՒՂՈՒՄ (2 ՆՅՈՒԹ)

- Պատգամավորուհին—նոր կենցաղի հիմքը գտնողն է.
- Գեղջկուհին, խորհրդային իշխանությունն ու լրասավորությունը.

# ԾՐԱԳԻՐ

## ԳԵՂԱԿՈՒՅԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

I-ԻՆ ՇՐՋԱՆ.—ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1-ԻՆ ՆՅՈՒԹ—ԳԵՂԱԿՈՒՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՍՀՄ-ՈՒՄ

ա) Ի՞նչ վերաբերմունք կա գեղի գեղջկուհու աշխատանքը խորհրդային իշխանության որով. (գեղջկուհիները գյուղացիներին հավասար իրավունքներ ունեն անտեսությունը կառավարելու և միասնաբար կատարած աշխատանքի արդյունքը բաժանելու մեջ): Ի՞նչ վերաբերմունք կար գեղի գեղջկուհու աշխատանքը ցարիզմի որով. (գեղջկուհու աշխատանքը գյուղատնտեսության մեջ, նրա տնային լրացուցիչ աշխատանքը յերբ բոլորովին զուրկ էր քաղաքական և ստացվածքային իրավունքներից):

բ) Գեղջկուհու իրավահավասարությունը կյանքում կիրառելու դժվարությունները. (գեղջկուհիների կուլտուրական ու քաղաքական մակարդակի ցածությունը, գյուղում տղամարդկանց հաճախական անբարեկացած պարագաների առաջնային դիրքությունը և անբարեկացած պարագաների առաջնային դիրքությունը):

յերբ նա մասնակցություն է ցույց տալիս հասարակական կյանքին): Խորհրդային իշխանության և Կոմունիստական կուսակցության ձեռք առած միջոցները՝ գեղջկուհիների իրավահավասարությունը փաստորեն կյանքում կիրառելու ուղղությամբ. (քաղ-լուսվարական աշխատանք, կենցաղային ոգություն, խորհուրդների, կոոպերացիայի, գատարանի և այլ ասպարեզներում առաջ քաշելու աշխատանք):

գ) Գեղջկուհու իրավունքները ըստ հիմնական որենքների (սահմանադրություն) ընտրելու և ընտրվելու իրավունք—խորհուրդներում, շրջգործկոմներում և ավելի բարձրագիր գործադիր կոմիտեներում՝ մինչև կենտգործկոմը (ներառյալ): Ի՞նչ եր սովորեցնում իլյուսն ու կոմկուսակցությունը գեղջկուհիների իրավունքների մասին. «Յուրաքանչյուր խռարարաբուհի պետություն կառավարել պիտի սովորի»:

դ) Ինչպես ե պաշտպանված գեղջկուհու ստացվածքային շահերը հողային որենագրքում. (հողաբաժին ստանալու իրավունք, ամուսնուց բաժանվելու դեպքում ունեցվածքի հավասար բաժանման իրավունք, մասնակցություն հողային ընկերություններին և այլն):

յ) Գեղջկուհու և նրա յերեխայի շահերի պաշտպանությունը ըստ ընտանեկան-ամուսնական որենութքի. (այլմենադի ապրուստի միջոցի), ամուսնա-

լուծության իրավունք, կնոջ իրավունքը ապահովություն ստանալու՝ իր աշխատունակությունը կորցնելու դեպքում և այլն):

Վորպես գործնական աշխատանք, խորհուրդ և տրվում զնել դատարանի կամ հողային հանձնաժողովի նախագահի գեկուցումը և հողային հանձնաժողովում կամ դատարանում աշխառող պատգամավորությունը: Հարցեալիք այսպես պիտի գրվի, վոր լուսաբանվի, թե այդ հիմնարկները ինչպես են պաշտպանում գեղջկուհու շահերը:

### 1-ԻՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

1. Խորհրդային իշխանությունն ու Կոմունիստական կուսակցությունը միշտ ել խոչոք նշանակություն են տվել կնոջ մասնակցությանը՝ մեր տնտեսական շինարարության աշխատանքներին: Դեռ 1919 թվին ընկ. Լենինն ասում եր. «Վերացնելով հողի մասնավոր սեփականությունը և համարյալ լիովին վերացնելով գործարանների ու զավոդների մասնավոր սեփականությունը՝ Խորհրդային իշխանությունը ձգտում է, վոր բոլոր աշխատավորները, վոչ միայն կուսակցականները, այլ և անկուսակցականները և վոչ միայն տղամարդիկ, այլ և կանայք մասնակցություն ունենան մեր տնտեսական շինարարությանը: Խորհրդային իշխանության ոկոսած այդ մեծ գործը հառաջադիմել կարող է միայն այն դեպքում, յերբ համայն Ռուսաստանում մի քա-

նի հարյուրի փոխարեն միլիոնավոր կանայք մասնակցություն ցույց կտան այդ աշխատանքներին: Այն ժամանակ մենք կարող ենք հավատացած լինել, վոր ամուր ու հաստատուն ե սոցիալիստական շինարարության գործը: Այն ժամանակ աշխատավորուներն ապացուցած կ'լինեն, վոր իրենք ել, առանց կարվածատերերի ու կասլիտալիստների կարող են ապրել ու տնտեսություն դեկավարել: Այն ժամանակ սոցիալիստական շինարարությունն Ռուսաստանում այնքան կայուն կլինի, վոր վոչ մի արտաքին կամ ներքին թշնամի սարսափելի չի լինի Խորհրդային հանրապետության համար»:

2. Ցարիզմի ժամանակ դեռ ճորտատիրական ըրջանից մնացած մի վերաբերմունք կար գեսկի գեղջկուհին, վորով, ինչպես ասում են. «աղջիկն ավելի եժան եր սովի գլխից»: Գեղջկուհին աշխատում եր գյուղատնտեսության մեջ, բացի այդ, նա աշխատում եր և տանը, խնամում եր յերեխաներին, բայց չնայած դրան, վոչ մի քաղաքական ու ստացվածքային իրավունք չուներ: Հոկտեմբերյան հաղթանակն եր միայն, վոր աշխատավոր կնոջ իրավունքները հավասարեցրեց տղամարդու իրավունքներին:

3. Գեղջկուհու իրավահավասարության որենքները կյանքում կիրառելու ժամանակ Խորհրդային իշխանությունն ու Կոմունիստական կուսակցությունը մի շարք գժվարությունների յեն հանդի-

պում: Համախի գյուղացիները անբարեացակամ վերաբերմունք են ցույց տալիս կնոջ հասարակական կյանքին մասնակցելու դեպքում: Ինչը, գեղջկուհին ել գեռ հեռու յե պահում իրեն հասարակական աշխատանքներից. նա ձնշվում է իր կիսագրագիտությունից, վախենում է, թե մի վորեւ պատճառվ կծաղրեն իրեն, մյուս կողմից նրան խանդարում են կենցաղային պայմանները. (անային աշխատանքները, յերեխաների խնամքը): Խորհրդային իշխանությունն ու կոմունիստական կուսասիցությունը մի շարք միջոցներ են ձեռք առնում կնոջ իրավահավասարությունը փաստորեն կյանքում կիրառելու համար: Կուլտ-կրթական աշխատանք և տարվում գեղջկուհիների մեջ և ընդհանրապես նույն աշխատանքը տարվում է ամբողջ գյուղացիության մեջ: Գեղջկուհին առաջ է քաշվում խորհուրդների, կոոպերացիայի, դատարանի և այլ հիմնարկների աշխատանքների մեջ, վորտեղ ամեն կերպ աջակցում են նրան, վոր սովորի, թե ինչպես պիտի «պետություն կառավարել»: Բացի այդ, մի շարք աշխատանքներ են տարվում գեղջկուհու կենցաղային պայմանները բարելավելու համար. (մոռըներ, խորհրդարաններ (կոնսուլտացիա) և այլն):

4. Խորհրդային իշխանության հենց առաջին որից մեր հիմնարկան որենքներում (սահմանադրության մեջ) գրված են գեղջկուհու քաղաքական իրավունքները: Այդ որենքների համաձայն գեղջկուհին

իրավունք ունի ընտրելու և ընտրվելու խորհուրդներում, չըջգործկոմում և բոլոր բարձրադիր գործադիր կոմիտեներում—մինչև կենտրոնական ներառյալ:

5. Հողային որենսգրքով գեղջկուհու շահերը պաշտպանված են գյուղացու շահերին հավասար: Նա իրավունք ունի հողաբաժին ստանալու, ցանկացած ժամանակը կարող է բաժանվել և առանձին ծուխ կազմել և ամուսնուց բաժանվելու դեպքում հավասար մաս է ստանալու այն գույքերից, ինչ վոր միատեղ տիրում են:

6. Ընտանեկան-ամուսնական որենսգիրքը կազմը ված է՝ կնոջ ու ամուսնու իրավահավասարության հիմունքով և նույնիսկ պաշտպանում է ավելի թույլ կողմից շահերը—մոր և մանկան շահերը: Ամուսնությունն ղեպքում մայրը ապահովություն է ստանում յերեխայի համար նրա հորից: Անհամատունակության դեպքում նա ևս ապահովում է ամուսնու կողմից:

## 2-ՐԴ ՆՅՈՒԹ—Ի՞՞ՆՉ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ա) Այժմ ի՞նչպիսի իշխանություն կա գյուղում: Ո՞վ է գյուղում Խորհրդային իշխանության հիմքը (բատրակներն ու չքավորությունը՝ պրոլետարիատի ղեկավարությամբ): Ո՞ւմնից է կազմված գյուղական խորհուրդը: Ո՞վ է ընտրում և ով իրա-

Վունք ունի ընտրվելու գյուղական խորհուրդում։ Ա՞վ և զրկված ընտրական իրավունքներից։

բ) Ա՞վ եր կառավարում գյուղը ցարիզմի ժամանակ (կալվածատերերը, զեմստվոյի պետերը, ուրիշագնիկները)։ Ա՞մ շահերն եյին պաշտպանում այդ կառավարիչները։

գ) Ինչո՞ւ զեղկուհին պետք է մասնակցություն ցույց տա տեղական խորհուրդներին։ (Գյուղխորհուրդը հոգ և տանում գյուղանտեսության բարձրացման մասին, պաշտպանում է գյուղի աշխատավորության շահերը, հոգ և տանում առողջապահության, գյուղի ժողովրդական լուսավորության և այլ ինդիրների մասին)։

դ) Ի՞նչպես եվարից-վեր կառաւցվում Խորհրդային իշխանությունը (Գյուղխորհուրդից մինչև միութենական կենտրոնացման)։ Խորհրդային իշխանությունը բանվորների, գյուղական չքավորության ու միջակների միությունն ե՝ բանվոր դասկարգի զեկավարության տակ։

յե) Ինչո՞ւ գյուղացիությունը շահագրգռված է, վոր բանվոր դասակարգը իր զեկավարը լինի։ Ի՞նչ եր սովորեցնում լենինը պրոլետարիատի զեկավար գերի մասին։ (Պրոլետարիատը իր աշխատանքի պայմանների շնորհիվ ավելի գիտակից ե, չամախմբված և հեղափոխական պայքարի մեջ ավելի շատ փորձ ու հմտություն ունի)։

զ) Ինչի՞ց ե կախված Խորհրդային իշխանու-

թյան աշխատանքների լույսումը կենտրոնում և տեղերում։ Ինչո՞ւ ակտիվ պատգամավորուհին պիտի ոգնի խորհրդի անդամներին և ընդհանրապես ամբողջ խորհրդին իր աշխատանքների մեջ։

Վորպես զործնական ինգիր, խորհուրդ և տըրվում զնել տեղական խորհրդի զեկուցումն այն իմաստով, վոր պարզի, թե ինչպես են նա ծառայում գեղջկուհու շահերին և այդ զըռւցին մասնակից անել այն գեղջկուհիներին, վորոնք աշխատում են տեղական խորհրդի սեկցիաներում։

2-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ  
1. Գյուղական խորհրդում նստած են գյուղի շահխատավորները (բատրակները, չքավորները, միջակները)։ Միայն նրանք են, վոր ոգտվում են լիակատար իրավունքներով։ Լնորական իրավունքներից զրկված ե գյուղի բնակչության մի անհան մասը—կուլակները, տերտերները, նախկին կալվածատերերը, ժոնդարմաները, ուրյագնիկները և այլն։ Գյուղխորհուրդներում զեկավար դերը պատկանում ե բատրակներին ու չքավորներին, վորոնք հենվում են իրենց ու միջակների կապի վրա։ Քաղաքներում զեկավար զերը խորհուրդներում պատկանում է պրոլետարիատին, վորը հենվում է աշխատավորական բոլոր շերտերի վրա։

2. Յարիզմի ժամանակ գյուղը կառավարում էյին կալվածատերերը, զեմստվոյի պետերը և ուրյագնիկ-  
ԵՐԱԳԻՐ ՍԱԵՍԱ



ները: Գյուղացիական լայն մասսան գյուղը կառավարելու խնդրում վոչ մինչանակություն չուներ: Գյուղի կառավարիչները յեկեղեցական-կարվածատիբական իշխանության ներկայացուցիչներն ենին և պաշտպանում ենին կալվածատերերի ու կուլտկաների շահերը:

3. Գյուղական խորհրդի գործունեյությունը անմիջականորեն ընդուրելում է գյուղացիների ու գեղջկուհիների կարիքներն ու շահերը: Վորքան լավ է աշխատում գյուղի չքավորության ու բարեկանության ընդուրելու համար, այնքան նա ավելի յե հոգ տանում գյուղի չքավորության ու բարեկանության կարիքների մասին, գյուղացիության առողջապահության ու լուսավորության հարցերի մասին, և այն՝ տուաջին հերթին չքավորության համար: Գյուղխորհրդի աշխատանքը կախված է նրա կազմից և ովքեր են ընտրված խորհրդի անդամ և ինչպես կաշխատեն այդ ընտրվածները: Յերբ գյուղ-խորհրդում կաշխատեն բարեկաների, չքավորների ու միջակների ներկայացուցիչները, յերբ գյուղ-խորհրդում ապահովված կլինի կոմիտեսակցության ղեկավարությունը, այն ժամանակ միայն գյուղխորհրդը կարող կլինի իրականացնել իր առաջ դրված խնդիրները, պաշտպանել գյուղի չքավորության ու միջակների շահերը և պայքարել կուլտակների ազգեցության դեմ:

4. Խորհրդային իշխանությունը առաջարկում և պաշտպանում է աշխատավորության շահերը:

Խորհրդային իշխանությունը բանվորների ու գյուղացիների միությունն է: Հենց գյուղացիների շահերը պահանջում են, վոր այդ միության մեջ ղեկավարողի գերը բանվոր գասակարգին պատկանի: Շնորհիվ այն հանգամանքի, վոր պրոլետարիան աշխատում է գործարաններում, նա ավելի համախմբված է, գիտակից և հեղափոխական պայքարում ավելի տոկուն է ու փորձված:

Բնկ. Լենինն ասում է, վոր «խորհրդային պետական կազմակերպությունն այնպես է հարմարեցված, վոր պրոլետարիատն իր ձեռքն առնի պետության ղեկավարի գերը, վորպես կապիտալիզմի աղղեցությամբ ավելի համախմբված ու գիտակցությամբ ավելի բարձր գասակարգ: Բոլոր ճնշված գասակարգերի ու համաշխարհային հեղափոխական շարժման փորձը ցույց է տալիս, վոր պրոլետարիատն է միայն, վորը հնարավորություն ունի ի մի հավաքելու և իր հետեւից տանելու աշխատավորության ու շահագործվող բնակչության բոլոր հետամնաց ու ցրված խավերին»:

5. Դեռևս ամենուրեք տեղական գյուղխորհրդի աշխատանքը հարկավոր բարձրության վրա չի դրված: Կան, ի հարկե, նրա աշխատանքների մեջ նվաճումներ, բայց գեռ կան և շատ թերություններ: Անհրաժեշտ է աշխատացնել և բարեխավել խորհրդի աշխատանքը, իսկ դա կարելի յե անել գյուղացիների ու գեղջկուհիների լայն մասսաները խորհրդի

աշխատանքների մեջ քաշելով։ Գյուղացիների ու գեղջուհիների ջանքերով և պրոլետարիատի զեկավարությամբ գյուղասրհորդի աշխատանքների բոլոր թերությունների վերացումը կողնի Խորհրդային իշխանության հետագա շինարարությանը՝ հոգուտ գյուղի աշխատավորության շահերի։ Պատգամավորուհին՝ խորհրդի ու նրա աշխատանքների առաջին ոգնականը պիտի լինի։

### Յ-ՐԴ ՆՅՈՒԹ—ՇՐՋԱՆԱՑԻՆ ԳԱՆՉԱՐԿՂ ՅԵՎ ՀԱՐԿԵՐԸ

ա) Գյուղասրհորդը վո՞րտեղից է միջոցներ ստանում տեղական կարիքների հողալու համար։ (դպրոցական շենքեր նորոգելու, նորերը կառուցելու, ճանապարհներ անց կացնելու և այլ կարիքների համար)։ Տեղական բյուջե։ Հարկեր և ձեռնարկությունների վարձակալության տալր։ (ձիթահանները, ջրաղացները և այլն)։

բ) Ո՞վ է գյուղում հարկեր վճարում։ (հարկատունների հիմնական մասսան կուլակներն ու հարուստ գյուղացիներն են)։ Գյուղացիության 20%-ը՝ նրա ամենաչփակոր մասը բոլորովին ազատվում է հարկերից։ Տարեց-տարի հարկերի ծանրությունը ընկնում է հարուստ տնտեսությունների վրա։ անցյալ տարի բացի այն, վոր 5·000·000 տնտեսություն պահպան ելին հարկից, մնացած թույլ տնտեսություններն ել վճարում ելին 4%, իսկ հարուստները

մինչև 12%։ Այս տարի, բացի ազատվածներից, թույլերը վճարում են 2%, իսկ հարուստները—

20%։ Թագավորի իշխանության ժամանակ ո՞վ եր վճարում հարկերի մեծագույն մասը. (գյուղական ամբողջ մասսան)։

գ) Խորհրդային իշխանության հարկային քաղականությունը (գյուղատնտեսական միասնական հարկ)։ Հարկադրման պրոդրեսիվ (առտիճառաբար աճող) ձեր՝ ըստ տնտեսության բոլոր ձյուղերի և յեկամուտների (անասուններ, վարելահողեր, ձեռնարկություններ) արհեստավորական հարկ։

դ) Պետությունը վո՞րտեղից է միջոցներ ստանում։ (յեկամուտներ արդյունաբերությունից, պետառուերից, յեկամտային հարկ, արհեստավորական հարկ, մասնավոր առևտորից հարկ և այլն)։ Ինչի՞ վրա յե ծախսում խորհրդային իշխանությունը իր ստացած միջոցները. (գյուղատնտեսության և արդյունաբերության բարձրացման, կարմիր բանակի, առողջապահության, ժողովրդական կրթության և այլ կարիքների համար)։ Ինչի՞ վրա յե ծախսում ցարական կառավարությունը ժողովրդական կուտակած միջոցները. (թագավորին, իշխաններին, մատնիչների ամբողջ բանակներ և ժամարմներ պահելու համար)։

յե) Խնայողության ուժիմը կիրտոնելու անհրա-

ԺԵՀՄՈՒԹՅՈՒՆԻ տեղական բյուջեն կազմելու ժամանակ :

Վորպես գործնական աշխատանք խորհուրդ և արվում դնել խորհուրդի բյուջետային հանձնաժողովի գեկուցումը և այդ հանձնաժողովում աշխատող պատգամավորութիւնը հաշվետվությունը:

### Յ-ՐԴ ՆՅՈՒԻԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՏՔԵՐԸ

**Գյուղիորհուրդը գյուղի տեղական կարիքների համար** (դպրոցների վերանորոգելու և նորեր կառուցելու, ճանապարհներ անցկացնելու և այլն կարիքների համար) միջոցներ ստանում և ըջանալին գանձարկղից: Շրջանային գանձարկղը հիմնվում է և կազմվում յուրաքանչյուր գյուղի տեղական բյուջեյի վրա: Նրա յեկամտային հիմնական հասը կազմվում է հարկերից և տեղական ձեռնարկությունների վարձակալությունից (ձիթահաներ, ջրաղացներ և այլն):

2. Խորհրդային իշխանության հարկային քաղաքականությունը միանգամայն տարրերվում է ցարիքի հարկային քաղաքականությունից:

**Մինչդեռ ցարիքի ժամանակ հարկերի ամբողջ ծանրությունն ընկնում եր գյուղի չքաղոր և միջակ մասսայի վրա, այժմ, խորհրդային իշխանության որով, հարկերի մեծագույն մասը վճարում են կուլակներն ու հարուստ գյուղացիները:**

3. Գյուղատնտեսական միասնական հարկը

զանձվում է տնտեսության բոլոր տեսակի ձյուղերից (վարելահող, գործիքներ, անասուններ և այլն) և վորքան տնտեսության յեկամուտները բարձրանում են, այլքան ել մեծանում ենրա վճարելիք հարկը (պրոդրեսիվ սկզբունքը):

4. Բացի տեղական կարիքներից պետությունն ունի նաև ընդհանուր պետական ծախուր ու յեկամուտներ: Խորհրդային իշխանությունն իր միջոցները ծախում ե գյուղատնտեսության ու արդյունաբերության բարձրացման համար, կարմիր բանակը պահելու, դպրոցների, համալսարանների շինարարության, ժողովրդական ստողջապահության և այլ կարիքների համար: Այդ ամենի համար Խորհրդային իշխանությունը յեկամուտներ և ստանում արդյունաբերությունից, պետառեարից, գյուղատնտեսական ու արհեստագորական հարկերից, մասնավոր առետրի հարկերից և այլն:

5. Ցարական կառավարությունն իր տուրքերով ծառւմ եր աշխատավոր բնակչության միջոցները և այդ ամենը ծախում եր թափավորական պալատի և նրա չքախմբի վրա, բանվորներին ու գյուղացիներին հարստահարող մատնիչների ժամարմների բանակը պահելու համար:

6. Պետք ե չարունակ տնտեսել թե՛ մեծ և թե՛ փոքր գործերում: Պատգամավորուհին ամեն կերպ պիտի ոգնե գյուղխորհրդին, վոր նա իր աշխա-

տանքները կանոնավորե և խորհրդային ամեն մի  
կողեկը խնայի:

4-ՐԴ ՆՅՈՒԹ: ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ ԶԿԱՆ ՃՆՇՎԱԾ  
ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐ

ա) Վ՞ո՞րուղից են առաջացել ազգային խարու-  
թյունները: Ինչո՞ւ շատ անգամ հայհոյելիս մնելին  
անվանում են խախոլ, ջնուդ, արմյաշկա և այլն:  
Սրբյոք տարրեր ազգությունների պատկանող աշ-  
խատավորներ տարրե՞ր շահեր ունեն: Ի՞չպես  
միասին պայքարում եյին զանազան ազգերի բան-  
վորներն ու գյուղացիները, կալվածատերերի և կա-  
պիտայիսների դեմ:

բ) Յարական միուսաստանում ապրում եյին մոտ  
հարյուր տեսակ զանազան ազգեր: Մուս կամ լեհ  
կարվածատերերն ու կապիտայիսները միատեսակ  
ճնշում եյին թե ոռու, թե լեհ, թե ուկրայնացի,  
թե հայ և թե ամեն ազգի բանվորներին ու գյուղա-  
ցիներին: Յարական կառավարությունը, զանազան  
ազգերի կարվածատերերի ու կապիտայիսների  
հետ միասին, ճնշում եյին բոլոր ազգերի, բանվոր-  
ներին և գյուղացիներին, մանավանդ ճնշված ազ-  
գությունների աշխատավորներին: Այդ ճնշված ազ-  
գությունների մեջ ել ամենաճնշվածն աշխատավոր  
կինն ե յեղել:

տ) Ինչո՞ւ յարական կառավարությանը ճեռնոտու-  
յեր զանազան ազգությունների միջև խորություն-

ներ ստեղծել: Ի՞նչ եր ասում լենինը այդ մասին.  
«Այդ նպատակը պարզ է—հեռացնել ժողովրդական  
մասսաների ուշադրությունը միապետության դեմ  
պայքարելու խնդրից, բնակչության քաղաքականա-  
պես ահաս մասերին զրգուել հեղափոխականների  
դեմ»:

դ) Խորհրդային Սոցիալիստական Հանրապե-  
տությունների Միությունը զանազան ազգային  
իրավահավասար հանրապետությունների աշխա-  
տավորության ինքնակամ միավորումն ե: (Յու-  
րաքանչյուր հանրապետություն իր ազգու կամքով  
մտնում է Միության մեջ և իր կամքով ել կարող ե  
դուրս գալ այդ միությունից):

յե) Յարիզմի որով ճնշված ազգությունների  
գրությունը՝ Խորհրդային իշխանության ժամա-  
նակ(բոլոր ժողովուրդների իրավունքների հավա-  
սարություն, ավելի հետամնացներին ու թույլերին  
ցույց ե արվում անտեսական ու կուլտուրական  
ուժնեղակություն):

զ) Արևելքի աշխատավորուհու դրությունը  
ցարիզմի ժամանակ և այժմ: Արևելքի աշխատա-  
վորուհուն ազատագրելու և նրան արտադրական ու  
հասարակական-քաղաքական կյանքի մեջ քաշելու  
համար տարվող աշխատանքը:

4-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՏԵՐԸ

1. Կալվածատերերի և բուրժուազիայի յարա-

կան կառավարությունը, գյուղի ու քաղաքի աշխատավորության ուշադրությունը կարվածատերերի ու Փաքրիկանաների դեմ պայքարելու խնդրից հետացնելու նպատակով, պառակտումներ եր գցում զանազան ազգությունների աշխատավորների միջև։ Թուրքերին գրգռում եր հայերի դեմ, սուսներին ուկրայնցիներին, ուկրայնցիներին հրյաների դեմ և այլն։ Այստեղից եր ծագում այն սովորությունը, վոր հայՀոյելիս անվանում եյին խախոլ, չհուդ, արմյացիա և այլն։

2. Զանազան ազգի գյուղի և քաղաքի աշխատավորները տարբեր շահեր չունեն։ Ռուս, լեհ, թուրք, ուկրայնացի գյուղացիները հավասար չտփով ձնչվում ու շահագործվում եյին ռուս, լեհ, թուրք, ուկրայնացի կարվածատերերից։ Բոլոր ազգերի բանվորներն ու գյուղացիները միացած պայքարում եյին բոլոր ազգերի կարվածատերերի ու գործարանատերերի դեմ, ցանկանալով ստեղծել Խորհրդային իշխանություն։

3. Զնայած վոր զանազան ազգությունների կարվածատերերն ու գործարանատերերը կատաղի կերպով մրցում են իրար դեմ, բայց ելի նրանց միացնում ե այն հանդամանքը, վոր բոլորն ել ցանկանում են վորքան կարելի յե շատ շահագործել բանվորներին ու գյուղացիներին և շատ հարստություն գիտել։ «Կապիտալիստներն ու կարվածատերերը ցանկանում են ինչպես ել վոր լինի, բաժան-

բաժան անել տարբեր ազգությունների բանվորներին, իսկ իրենք, այս աշխարհի հզօրները հրաշալի կերպով միանում են ինչպես միլիոնավոր գործերի փայտերեր՝ և՛ ուղղափառները, և՛ հրեաները, և՛ սուսները, և՛ լեհերն և ուկրայնացիները բոլորը, ովքեր վոր կապիտալ ունեն, համերաշխ կերպով շահագործում են բոլոր ազգերին» (Լենին)։

4. Խորհրդային իշխանության մեջ բոլոր ազգությունների իրավունքները հավասար են։ ԽՍՀՄ-ի մեջ ապրող մոտ 100 տեսակի ժողովուրդները ընդհանուր ուժերով սոցիալիզմն են կառուցում։ Սոցիալիստական շինարարության գործին լծված աշխատավորությանը ձեռնտու չե, վոր պառակտումներ լինեն զանազան ազգությունների աշխատավորների միջև, նրանց հարկավոր և ամենասեր միություն։ Բոլորը միասին նրանք մի հզոր ուժ են կազմում։ Բաժան-բաժան լինելու գեպքում խորամանկ բուրժուազիայի համար հեշտ կլիներ ջախջախել նրանց։ Դրա համար ել Խորհրդային Միությունը զանազան ազգային հանրապետությունների աշխատավորության կամավոր միավորումն ե։ Ազգային հանրապետություններից ամեն մեկն իր կամքով մտնում ե ԽՍՀՄ-ի մեջ և ցանկության գեպքում, ամեն մի հանրապետություն կարող ե գուրս գալ Միությունից։

5. Խորհրդային իշխանությունը ողնում ե մանր ժողովուրդներին՝ վերածնել իրենց անտեսու-

թյունը և հասնել ԽՍՀՄ-ի կուլտուրապես ու տնտեսագես առաջ անցած կենտրոնական մասերին:

«Բավական չի փաստորեն իրավունքներով հաշվասարեցնել Ռուսաստանի բոլոր ժողովուրդները. Հարկավոր է նաև ոգնել աշխատավոր մասսաներին, վոր նրանք հասնեն իրենցից առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին: Յեզ կուսակցությունը, և՝ Խորհրդային իշխանությունը մի շարք միջոցներ են ձեռք առնում մանր ազդությունների անհետությունը վերածնելու համար (կոռպերացիայի և արդյունագործության զարգացումը՝ տնայնագործներին ոգնության և խոշոր արդյունաբերության աստիճանական բարձրացումը): (Մ. Կ. (բ.) Կ. X Համագումար):

6. Արեւելքի աշխատավորուհու ազատագրման համար կիրառվում են հատուկ որենսդրական կարգի միջոցներ, կուլտուր-կրթական ու կենցաղային աշխատանքներ:

## 2-ՐԴ ԵՐԱՎՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

5-ՐԴ ՆՅՈՒԹ. ԳՅՈՒՂԱԾՆՑԵՍՈՒԹՅՈՒՆ

ա) Գեղջկուհու մասնակցությունը գյուղատնտեսության մեջ: Գեղջկուհիներն ամբողջ գյուղական բնակչության կեսից ավելին են կազմում: Գեղջկուհին աղամարդուն հավասար աշխատում է գյուղատնտեսության բոլոր ճյուղերում (հողագործության, թունաբուծության, անտոնապահու-

թյան և այլն): Գեղջկուհին վոչ միայն բանվորական ուժ է, այլև անտեսության զեկավար է (միլիոննից ավելի գյուղական տնտեսություններ կան, առանց աղամարդ բանվորական ձեռքերի): Այդ անտեսություններում համարյա ամբողջովին գեղջկուհին և զեկավարում բանջարաբուծության, թունաբուծության և այլ ճյուղերի աշխատանքները):

բ) Գեղջկուհու հասարակական-քաղաքական կյանքում ունեցած գերը գեռես չե համապատասխանում նրա տնտեսական կյանքում ունեցած մասնակցությանը: (Դեռևս անբավարար է գեղջկուհու մասնակցությունը խորհրդակներին, գյուղելուներին, կոռպերացիային և հասարակական կյանքի մյուս ճյուղերին):

գ) Ի՞նչ է առել կենտգործկոմը գեղջկուհու գյուղատնտեսությանը մասնակցության մասին (1925 թ. մարտի 8): Գեղջկուհու ինքնագործունեյության բնդարձակման անհրաժեշտությունը նաև աշխատանքի մեքենայացման ասպարիզում (մաքրեչների, ծեծիչների, իլիկների և այլնի գյոււր):

դ) Գյուղատնտեսության նշանակությունը յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության համար (Գյուղատնտեսությունը արդյունաբերությանը հում նյութ, վառելանյութ, հաց մատակարարողն ու արդյունաբերական ապրանքների հիմնական սպառողն է): Գյուղատնտեսության գրությունը 1926 թվին:

յե) Գյուղատնտեսության ձևերի հետամնացությունն ու նրա սակավ շահաբերությունը։ Տնտեսությունը վարելու կողեկտիվացմանն ու լավագույն ձևերին անցնելու անհրաժեշտությունը (բազմադաշտ ցանքը, վաղաժամ հողի հանդատացում, գյուղատնտեսության մեքենայացում, անտառապահության լավագույն ձևերի կիրառում, կուլտուրական բույսերի մշակում, հողաշինարարական աշխատանքների կարգավորում և այլն)։ Ի՞նչ են անում կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը գյուղատնտեսության բարձրացման համար։ (կողեկտիվ տնտեսություններին տրվող ողնությունն ու արտոնությունը, գյուղատնտեսական գործիքների մատակարարումը, գյուղատնտեսական վարդի)։ Ի՞նչ են ասել 14-րդ կուսկոնֆերենցիան ու 14-րդ կուսամագումարն այդ հարցի մասին։

զ) Գյուղատնտեսության զարգացումն ու գյուղի շերտավորումը։ Գյուղի հիմնական խավելը (չքավոր, միջակ, կուլտկ)։ Կուսակցության քաղաքականությունն այդ շերտերի նկատմամբ։ («Յեթե չքավորությունը և ամենից առաջ բատրակները գյուղում հանդիսանում են պրոիտարիատի հենարանը, ապա միջակը հանդիսանում է և պետք է հանդիսանա նրա հզոր դաշնակիցը» (14-րդ կուսամագումարի վորոշումներից)։ Կուլտկի դեմ պայքարելու միջոցները («ինչպես չքավորությունը կուլտկի դեմ կազմակերպելու միջոցով, այնպես եւ

պըոլետարիատի ու չքավորների դաշինքը միջակների հետ ամրապնդելով, միջակին կուլտկից կտրել նրան չեղոքացնելու նպատակով»—(14-րդ կուսամագումարի վորոշումներից)։

ե) Ի՞նչպես ե կուսակցությունն աշխատանք տանում չքավորության մեջ (չքավորական խմբակները և նրանց անելիքները)։ Ի՞նչ ասաց 14-րդ կուսամագումարը շերտավորման հարցի մասին։

Վորպես գործնական հարց խորհուրդ ե տրվում գնել գյուղատնտեսիք գեկուցումը տնտեսության նոր ձևերին անցնելու նշանակության մասին և պատգամավորուհիների յելույթները, հատկապես նրանց վորոնիք աշխատում են գյուղատնտեսական խմբակներում։

### Յ-ՐԴ ՆՅՈՒԽԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

1. Գեղջկուհին տղամարդուն հավասար մասնակցում և գյուղատնտեսության բոլոր ճյուղերում։ Տնտեսության մի շարք ճյուղեր ամբողջովին գրանցում են նրա ձեռքում, ինչպես որինակ՝ թուչնաբուծությունը, կաթնատնտեսությունը, մի շարք տնայնագործական աշխատանքներ (գուլպա, շալ, կարպետ, գորդ և այլն գործերը)։ Միլիոնից ավելի գյուղական տնտեսություններ կան, վորոնց գլուխ գեղջկուհիներ են անցած։

2. Գեղջկուհու գերր հասարակական-քաղաքական կյանքում դեռևս չի համապատասխանում նրան

ունեցած մասնակցությանը գյուղատնտեսության մեջ. Հասարակական կյանքում դեռ քիչ են ակտիվացել գեղջկուհիները:

3. Գեղջկուհին տանը հսկայական լրացուցիչ աշխատանք է կատարում: Նա վոչ միայն բլագք է անում, կերակուր յեփում, յերեխաներին խնամում, այլ և զանազան բաներ է գործում, չոր կարում և այլն: Հաճախ այդ աշխատանքները նա կատարում է նախապատմական գործիքներով ու միջոցներով, վորը նրանից չափազանց շատ ժամանակ ու աշխատանք է խլում: Գեղջկուհու լրացուցիչ աշխատանքի մեքենայացումը նրան կազմակի այդ ծանր աշխատանքներից և նա ժամանակ կունենա ավելի շատ մասնակցելու հասարակական-քաղաքական կյանքին: Պատգամավորուհին պետք է այդ ուղղությամբ հրահրի մասսաների ինքնազործունելունը և կոռպերացիայի ուշադրությունը գրավի այդ աշխատանքի վրա:

4. Գյուղատնտեսությունը մեր յերկրի կյանքում հսկայական դեր է կատարում: Գյուղատնտեսությունը մատակարարում է յերկրին հում նյութ, վառելանյութ, հաց, գյուղական բնակչությունը արդյունաբերական ապրանքների հիմնական ապառզն է (գյուղատնտեսական գործիքներ, չիթ, շաքար, նավթ, մեխ և այլն):

5. Գյուղատնտեսությունը (նրա ընդհանուր արդյունքը) 1925 թվին հասավ նախապատերազմ-

յան շրջանի մոտ 71%-ին: Նրա արտադրությունը անընդհատ տձում է, բայց և այնպես մինչեւ այժմ ելնու քիչ արդյունավետ է: Դա բացատրվում է նրանով, վոր գյուղատնտեսությունը մեծ մասամբ տարվում է հին հետամնաց միջոցներով: Գյուղատնտեսության նոր ու կատարելազործված միջոցների անցնելը, նրա կոլեկտիվացումն ու մեքենայացումը նրա արդյունավետության բարձրացումը մեր յերկրի՝ սոցիալիզմի համեմելու ձանապարհն է: Դրա համար ել Խորհրդային իշխանությունը չքավոր ու միջակ տնտեսություններին ոգնություն է ցույց տալիս, վարկ է տալիս նրանց մեքենաներ գնելու, կոլեկտիվ տնտեսություններին արտօնություններ և տալիս և այլն:

6. Գյուղատնտեսության գարգացումը տեղի է ունենում գյուղի բնակչության տարրեր շերտերի պայքարի պայմաններում: Կոմունիստական կուսակցության 14-րդ համագումարը բնորոշեց յուրաքանչյուր շերտի տեսակարար կշեռը, և վորոշեց թե այդ խավիերից տմեն մեկի նկատմամբ ինչ քաղաքականություն պիտի տանել: Այդ քաղաքականությունը կայանում է նրանում, վորպեսզի բոլոր տընտեսական ու այլ միջոցները, վոր կիրառում և պրոլետարական պետությունը գյուղի նկատմամբ, կենուրոնան բատրակի, չքավորության վրա, վորպես պրոլետարիատի հենարանները գյուղում և միջակի՝ վորպես պրոլետարիատի հիմնական գաշնակցի:

(Զեկուցել, թե ի՞նչպես աշխատանք են տանում գյուղխորհուրդի չքավորական խմբակները):

### 6-ՐԴ ՆՅՈՒԹ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ա) Գյուղացու և գեղջկուհու աշխատանքը գյուղատնտեսության մեջ և բանվորի ու բանվորուհու աշխատանքը գործարանում սերտորեն կապված էն: Արդյունաբերությունը գյուղատնտեսությանը տալիս և արտադրութան գործիքներ (տրակտոր, գործան և այլն) և սպառման նյութեր (չաքար, նավթ, չիթ, մեխ և այլն): Արդյունաբերության նշանակությունը գյուղատնտեսութան զարգացման համար (հողի մեքենայական մշակմանն անցնելը, հողի պարաբառացումը, վնասատուների գեմ պայքարելը): Արդյունաբերության զեկավար գերը ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ:

բ) Յերկրի ինդուստրալիզացիան, ու նրա զեկավար նշանակությունը արդյունաբերության և ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համար:

Ինդուստրիալիզացիայի դերը՝ ԽՍՀՄ-ի կապիտալիստական յերկրներից տնտեսապես անկախ լինելու խնդրում:

գ) Արդյունաբերության նվաճումները 1926 թվին: Տնտեսական դժվարությունները, նրանց պատճառներն ու ժամանակավոր բնույթը (ապրանքային սովը):

դ) Տնտեսական դժվարությունները վերաց-

նելու հիմնական միջոցները (խնայողության սեփիմը, գների իջեցումը, արտադրական դիսցիպլինան, պահեստի գումարների կուտակումը և այլն):

յե) Տնայնագործական արդյունաբերությունն ու նրա նշանակությունը: Նրա կոռպերացումն ու այդ կոռպերացման նշանակությունը սոցիալիզմի կառուցման համար: Գեղջկուհու մասնակցությունը անայնագործական արդյունաբերության մեջ:

Վորպես գործնական խնդիր, խորհուրդ և արբարվում գնել բարեակ պատգամավորուհների յերաշխները:

### 6-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

1. Արդյունաբերության շահերը սերտորեն կապված են գյուղատնտեսության շահերի հետ: Արդյունաբերությունը մատակարարում և գյուղատնտեսության արտադրական միջոցներ և լայն գործածության և սպառման առարկաներ: Արդյունաբերությունը նպաստում և գյուղատնտեսության բարձրացմանն ու զարգացմանը՝ մեքենայացման, վնասատուների գեմ կռվելու և այլ միջոցներով: Առանց արդյունաբերության զարգացման ու զեկավար գերի, գյուղատնտեսությունը մատնված կլիներ խղճուկ վիճակի և մրավման գիրկը կընկեր:

2. Արդյունաբերության ասպարիզում պետության առաջ հիմնական խնդիր և դրվագ՝ վերանորո-

գել զործարանները և կառուցել նորերը, առաջին հերթին մեքենա կառուցող զործարաններ, վորոնք կարողանան մեքենաներ ու մեքենայի մասեր պատրաստել մեր զործարանների աշխատանքները ոկալու համար:

«Մեր յերկրագործական յերկերը դարձնել այնպիսի ինդուստրիալ յերկեր, վորն ընդունակ լինի սեփական ուժերով իրեն անհրաժեշտ դործարանային մեքենաներ արտադրել—ահա թե վորն ե պլասվոր նպատակի հիմքն ու եյությունը: Նրանք (բուրժուական յերկերի կապիտալիստները) կցանկանային, վոր մենք սահմանափակվելինք որինակ՝ չթի արտադրությունը, բայց դա մեզ համար քիչ է, վորովհետեւ մեզ ցանկանալի յե վոչ միայն չթի արտադրել, այլ և այնպիսի մեքենաներ, վորոնք անհրաժեշտ են չթի արտադրելու համար»: Առանց դրան մեր յերկերը անտեսապես կախման մեջ կլինի կապիտալիստական յերկրներից: Բայց մենք «մեր բոլոր ուժերը պիտի զործադրենք այն ուղղությամբ, քանի մեր շրջապատում կապիտալիստական յերկրներ են, մեր յերկերը դարձնենք անտեսապես ինքնուրույն, ներքին շուկայի վրա հենվող մի յերկեր, վորն ուրիշ յերկրներին, կապիտալիզմից հեռացող և սոցիալիստական անտեսության հունի մեջ մտնող յերկրներին դեպի ինքը քաշող մի ոջակ հանդիսանա»: (Ստալինի 14-րդ համազումարում աված զեկուցումից):

3. Չնայած մեր արդյունաբերության զարգացմանը, վոր 1925 թվին հասել եր նախապատերազմյան 71%-ին, գարձյալ մեր յերկերը անտեսական դժվարություններ և առաջին հերթին ապրանքային սով: Այդ դժվարությունները պլասվորապես առաջանում են նրանից, վոր արդյունաբերությունը կառուցված և նախապատերազմյան կահավորմամբ, վորը չի համապատասխանում գյուղացիության կողմից ապրանքների պահանջի բարձրացմանը: Այդ պահանջն աճել և գյուղացիության նյութական զրության բարելավման չնորհիվ, վորն արդյունք է հողի մասնավոր սեփականության վերացման, գյուղատնտեսության հարկերի փոքրացման և նախապատերազմյան շրջանի հետ համեմատած՝ գյուղատնտեսության յեկամուտի ավելացման:

4. Տնտեսական դժվարությունները վերացնելու համար Համար կամ. կ. (բ) կ. Կենտկոմի պլենումը 1926 թվի ապրիլին մատնանշեց, վոր անհրաժեշտ և «մի կողմից ամբողջ յերկում իրականացնել խնայողության դաժան ուժիմը և պայքարել ավելորդ ու վոչ անարատրական ծախքերի դեմ, մյուս կողմից մեծացնել բնակչության ազատ միջոցների հոսանքը դեպի ամեն տեսակի վարկային, կոոպերատիվ ու ավետական փոխառության հիմնարկները, այդ կուտակումն յերկրի արտադրական ուժերի և ամենից առաջ ինդուստրիայի հետագա զարգացման համար

ողտագործելու նպատակով։ Մյուս կողմից վճռական միջոցներ ձեռք առնել աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, ինչպես արտադրության ուսցիունալացման միջոցով, մասնավորապես գործարանների ավելի լիակատար ոգտագործման, բանվորների վորակավորումը բարձրացնելու և գործարանային ձեռնարկությունների կազմակերպությունը բավացնելու միջոցով, այնպես ել բանվորական որվա խստացման, աշխատանքային դիսցիլինայի ուժեղացման, և աշխատանքից խուսափելու գեմ պայքարելու միջոցներով։» (Համկոմկուսի Կենտկոմի ապրիլյան պլենումի վորոշումներից)։

5. Տնայնագործական արդյունարերությունը այժմ, այս ապրանքային սովոր չըջանում բացառիկ նշանակություն և ստանում։ Նրա զարգացման գեղքում նա կարող է մասամբ ծածկել գյուղական բնակչության ապրանքային պահանջը, ինչպես և գյուղական տնտեսություններում կարող է զրագեցնել ազատ աշխատավոր ձեռքերը։ Տնայնագործական արդյունարերության մեջ գեղջկուհին շատ խոշոր դեր է խաղում (արտելները համարյա ամբողջովին կազմված են գեղջկուհիներից)։

Տնայնագործների ու տնայնագործուհիների համախմբումը տնայնագործական կոոպերացիայի շուրջը, ավելի մեծ խթան կդառնա տնայնագործության զարգացման համար, նրան կոոպերացիայի

միջոցով խոշոր սոցիալիստական արդյունարերություն դարձնելու գործում։

### 7-ՐԴ ՆՅՈՒԹ—ԿՈՌՊԵՐԱՑԻԱ

ա) Կոոպերացիայի նշանակությունը գյուղաշխական տնտեսության և գեղջկուհու համար (իրենց մթերքներն ավելի հեշտ ու ձեռնուու վաճառելու հնարավորությունը, ավելի լավ ու եժան ապրանքներ գնելու և վորապես միջոց, իր տնտեսությունը բարձրացնելու և բարելավելու։

բ) Կոոպերացիայի նշանակությունը չըավորության տնտեսական շահերը պաշտպանելու և կուլակի գեմ պայքարելու գործում։

գ) Գյուղատնտեսական ու տնայնագործական կոոպերացիայի նշանակությունը գյուղական տրնտեսության և գեղջկուհու համար (մասնավորապես կաթնատնտեսության, թոչնաբուծության, դինեկործության և վորձվածքների ասպարեզներում)։

դ) Սպասողական կոոպերացիայի նշանակությունը մասնավոր տնտեսականի, կուլակի և վաշխառուի գեմ պայքարելու խնդրում, գյուղացիական անտեսության ու գեղջկուհու վիճակի բարելավման գործում (լավ ու ավելի եժան ապրանքներ և այլն)։

յի) Վարկային կոոպերացիան ու նրա գերը տընտեսության վերականգնման գործում (մեքենաներ, սերմացու և այլ բաներ գնելու համար տրվող վարկը)։

զ) Ի՞նչ նշանակություն եր տալիս լենինը կոպերացիային՝ գյուղը դեպի սոցիալիզմը դիմելու գործում։

Ե) Կոռպերացիայի գերը գներն իջեցնելու, վերադիր ծախսերը կրճատելու պայքարի մեջ, ինայոզության սեժիմբ կիրառելու, աղբանքի վորակը բարձրացնելու և գյուղատնտեսության ու գյուղական բնակչության բոլոր շահերը պաշտպանելու գործում։

Ր) Կոռպերացիայի գեղջկուհու շահերին ծառայելը (մոր ու մանկան անկյունի, մսուրների կազմակերպումը և այլ խնդիրներ)։

Ց) Գեղջկուհիներին ավելի շատ կոռպերացման յենթարկելու անհրաժեշտությունը։ Գեղջկուհիների-կոռպերատիվ կազմակերպություններին մասնակցություն ցույց տալու նշանակությունը։ Գեղջկուհիներին կոռպերացիայի զեկավար աշխատանքների մեջ քաշելը։

Վորպես գործնական խնդիրը խորհուրդ և արքում դնել տեղական կոռպերատիվի և այնտեղ աշխատող պատգամավորութիւնների գեկուցումը։

## 7-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

1. Գյուղացիության համար գյուղատնտեսական կոռպերացիան այն նշանակությունն ունի, վոր նու համամբելով առանձին աշխատանքային տնտեսությունների նյութական միջոցներն ու բանվորա-

կան ուժը, ձեռնատու յե ամենքին և ընդհանուրին մեծ ոգուտ ե բերում։ Միավորվելով մանր տնտեսությունները ավելի ուժեղանում են, այդպիսով կոռպերացիան ծառայության շահերին և հանդիսանում ե ամենակարող միջոցը՝ կուլակի գեմ ոլայքարելու համար։

2. «Գյուղում կոռպերացիայի ծավալումն ու ամրապնդումն ամենից առաջ պայքարի միջոց է գյուղի չքավոր ու միջակ խավերին կուլակության աղեկուլյատիվ և վաշխառուական կեղեքիչ ցանցից ազատագրելու համար, վորը գյուղում ամենաբազմազն ձևերն ե ընդունում։ Նախ և առաջ գյուղացիական մասսաների լայն կոռպերատիվ ինքնագործունեյությունը մի դպրոց և գյուղացու համար կոլեկտիվորեն տնտեսությունը կազմակերպելու, դա ամենահամարակ և հասկանալի ձեն ե։

Գյուղում կոռպերացիայի անելիքը միայն այն չե, վոր գյուղացիական տնտեսությանը եժան զնով ապրանք մատակարարի, այսինքն՝ կազմակերպի նրան վորպես սպասողի։ կոռպերացիան պետք է կազմակերպի գյուղացուն նաև վորպես արտադրողի։» (13-րդ կուսհամագումարի կոռպերացիայի մասին հանաձ վորոշումից)։

3. Գյուղատնտեսության, գյուղացու և գեղջկուհու համար հատուկ նշանակություն ունի գյուղատնտեսական ու տնայնագործական կոռպերացիան (կաթնասունտեսական, թռչնաբուծական, կո-

նեփագործական և այլն) վորակղ գեղջկուհին դեկա-  
վար և հանդիսանում:

4. Սպառողական կոռպերացիան գյուղական  
բնակչությանը հնարավորություն և տալիս գյուղա-  
տնտեսությանն անհրաժեշտ գործիքներն ու լայն  
գործածության առարկաները ստանալ ուղղակի  
դործարաններից ու Փարբիկաներից, ավելի եժան ու  
ավելի լավ վորակի: Նա անփոխարինելի գործիք և  
հանդիսանում մասնավոր առեւտրականի, կուլակի  
ու չարչու դեմ տնտեսական պայքար մղելու գոր-  
ծում: Սպառողական կոռպերացիան հատուկ նշա-  
նակություն ունի առանձնապես գեղջկուհու համար,  
վորը տնային կարիքները հոգալու ժամանակ ամե-  
նից չատ և գժվարությունների հանդիպում:

5. Վարկային կոռպերացիան հնարավորություն  
և տալիս գյուղատնտեսությունը՝ բարձրացնելու,  
արտոնյալ վարկավորում կազմակերպելով գյուղա-  
տնտեսական մեքենաներ սեղմեր և այլն գնելու հո-  
մար:

6. Լենինն ասում էր, վոր կոռպերացիան գյու-  
ղում իրեն նպատակ և դնում «Հեշտացնել մանր ու  
անջատ տնտեսություններից գեպի խոչոր արտա-  
դրության անցումը կամավոր միավորումների հի-  
մունքներով: Լիակատար կոռպերացման պայման-  
ներում մենք արգեն յերկու վոտքով կանգնած կլի-  
նենք սոցիալիստական հիմունքների վրա»...

7. Գյուղում կոռպերացիան դեռ հարկավոր

բարձրության վրա չի կանգնած: Նա դեռ չառ թե-  
րություններ ունի, ինչպես որինակ՝ ապրանքների  
գների բարձր լինելը, գյուղի ազգաբնակության պա-  
հանջին համապատասխան ապրանքներ չստանալը:  
Սպառողական ու գյուղատնտեսական կոռպերացի-  
այի առաջ հետեւյալ խնդիրներն ե դրված—պայքա-  
րել վերադիր ծախսերի գեմ, իջեցնել ապրանքների  
գները, կիրառել խնայողության ոեժիմը, լավացնել  
ապրանքների ու մթերքների վորակը, ավելի լավ  
ծառայել գյուղական բնակչության շահերին:

8. Սպառողական կոռպերացիան գյուղում պի-  
տի ավելի մոտ լինի գեղջկուհուն և ավելի լավ ծա-  
ռայի նրա չահերին (ապրանքների տեսակների ըն-  
արությունը (ասորդիմենտ) մոր ու մանկան պա-  
հանջների հոշվառումը և կենցաղային ոգնություն  
—սուրբներ կազմակերպել և այլն):

9. Գեղջկուհին դեռ չատ քիչ և մասնակցում  
սուրբին կոռպերատիվ ցանցին: Պատղամավորուհի-  
ների և ընդհանրապես գեղջկուհիների մասնակցու-  
թյունը կոռպերատիվի խանութային հանձնաժո-  
ղովներին մասնակցելը, գեղջկուհուն կոռպերացիայի  
մեջ առաջ քաշելը և նրան կոռպերատիվի զեկավար  
աշխատանքներ հանձնելը (վարչությունների, վերս-  
տուգիչ հանձնաժողովների մեջ ընտրելը), զգալի  
չափով բարելավում և կոռպերացիայի աշխատանք-  
ները և չքավորության շահերին ծառայեցնում:

## Յ-ՐԴ ՇՐՋԱՆ — ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՅԵ ԿՈՄՊՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈԽԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Ե

8-ՐԴ ՆՅՈՒԹ — ԿՈՄՊՈՆԻՆԻՍՏԱԿԱՆ ԿՈԽԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵԿԱՎԱՐՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԹՅՈՒՆՆ

ա) Բանվորների ու բանվորուհիների և գյուղացիների ու գեղջկուհիների հիմնական մասսայի (բատրակների, չքավորների ու միջակների) շահերի բնդհանրությունը բանվորագյուղացիական պետության ամբապնդման և սոցիալիզմի շինարարության գործում :

բ) Կոմունիստական կուսակցությունը իրականացնում է Լենինի պատգամները բանվորագյուղացիական միության ամբապնդման մասին: Լենինյան կոմունիստական կուսակցության իմաստուն զեկավարությամբ մեր յերկրում սոցիալիզմն ե կառուցվում:

գ) Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական կոիվների ժամանակ ի՞նչը միացրեց քաղաքի ու գյուղի աշխատավորությանը (պայքարը կարգածատերերի ու կապիտալիստների դեմ—հողի, գործարանների ու զավոդների և խորհրդային իշխանության համար): Ո՞վ եր զեկավարում բանվորների ու գյուղացիների պայքարը Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ: Կարո՞ղ եյին արդյոք աշխատավորները հաղթել, յեթե չունենային

ամբակուռ ու միասնական Կոմունիստական կուսակցությունը, վորր աշխատավորության միակ առաջնորդն է:

դ) Կարո՞ղ եր արդյոք գյուղացիությունը հաղթել թագավորին ու կալվածատերերին, առանց բանվոր գասակարգի ողնությանն ու զեկավարությանը (բանվոր գասակարգի զեկավար զերը հեղափոխության ընթացքում): Ի՞նչ եր ասում է Լենինը բանվոր գասակարգի զեկավարության անհրաժեշտության ու կարեորության մասին՝ հաղթանակ տանելու և խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար (պրոլետարիատն ավելի գրագետ, գիտակից, համախմբված և փորձվագ և հեղափոխական պայքարի մեջ և այլն): Ի՞նչ է ասել 14-րդ կուսամագումարը բանվորացյուղացիական միության մասին:

յե) Կուսակցության զեկավար զերը պրոլետարական գիլտատուրա նվաճելու և սոցիալիզմի կառուցելու գործում:

զ) Բանվորացյուղացիական միությունը ապահովում է խորհրդային յերկրի ուժն ու կարողությունը: Խորհրդային յերկերը իրենց ազատագրության համար պայքարող համայն աշխարհի աշխատավորության հենարանն է:

Վորպես գործնական խնդիր խորհուրդ և արդիում զնել պատգամավորուհիների հիշողությունները Հոկտեմբերյան հեղափոխության (Հայաստան

նում Նոյեմբերյան հեղափոխության) և տվյալ գյու-  
քում խորհրդային իշխանություն կազմակերպվելու  
մասին:

### Տ-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

1. Նախորդ նյութերից պարզվեց, թե ինչպես  
աերտ կերպով կապված են իրար հետ արդյունաբե-  
րության ու գյուղատնտեսության շահերը, բանվոր-  
ների և չքավոր ու միջակ գյուղացիության շահերը:  
Առանց բանվորների ու գյուղացիների և բանվորու-  
հիների ու գեղջկուհիների սերտ կապի, անհնարին  
և բանվորա-գյուղացիական պետության հետագա  
պարզացումն ու սոցիալիստական տնտեսության շի-  
նարարությունը: Յե՛վ բանվոր դասակարգը, և  
բատրակները, չքավոր ու միջակ գյուղացիության  
լայն մասսաները ամենամեծ չափերով շահագրգու-  
գած են այդ յերկու հիմնական խնդրի իշականաց-  
ման համար:

2. Մեր յերկրում սոցիալիզմի շինարարությու-  
նը զեկավարում է Համամիութենական կոմմանիս-  
տական (բայլընկերի) կուսակցությունը, վորն,  
իրականացնում է Լենինի պատգամներ՝ բանվորա-  
գյուղացիական միության մասին: Առանց միասնա-  
կան ամրակուռ ու դիսցիպլինար կոմունիստական  
կուսակցության զեկավարության, ԽՍՀՄ-ի աշ-  
խատավորները չեյին կարող պաշտպանել իրենց յեր-  
կիրք խորամանկ թշնամիներից, չեյին կարող բարձ-

րացնել յերկրի տնտեսությունը և սոցիալիզմ կա-  
ռուցել:

3. Հոկտեմբերյան հեղափոխության ու քաղա-  
քացիական կոխվների վորձը ցույց տվեց, վոր քա-  
ղաքի ու գյուղի աշխատավորներին միացնում են  
նրանց ընդհանուր շահերը

Գյուղացիության լայն մասսաներին ու բան-  
վոր դասակարգին միացը ել ե մի վեհ նպատակ, այն  
ե՝ պայքարել կարվածատերերի ու գործարանատե-  
րերի դեմ, հողի ու գործարանների համար, խոր-  
հրայրային իշխանություն ստեղծելու համար: «Ի՞նչն  
եր, գյուղացիության ամենագլխավոր պահանջը:  
Նրա գլխավոր պահանջն եր հող և խաղաղություն:  
Ի՞նչն եր բանվոր դասակարգի ամենագլխավոր պա-  
հանջը: Նրա գլխավոր պահանջն եր գործարաններն  
ու գավողները վերցնել կապիտալիստներից ու գար-  
ձնել ժողովրդի սեփականությունը, նրա պահանջն  
եր խաղաղություն ու խորհրդային իշխանություն:  
Այսպիսով, բանվոր դասակարգի ու գյուղացիու-  
թյան միջև ստեղծվեց ու կոփիկեց այն միությունը,  
այն «բլոկը», վորը համեմատարար հեշտացը ց  
Հոկտեմբերյան մեծ որերի հաղթանակը»: (Լենին,  
Ռ. Կ. (ր) Կ. 10-րդ համագումարին տված զեկու-  
ցումից):

Ավելի պակաս նշանակություն չունի բանվոր  
դասակարգի ու գյուղացիության միության ամրու-  
թյունը, այժմ, խաղաղ, սոցիալիստական շինարա-

բության շրջանում։ Յե՛վ դյուզացիությունը և բանվոր դասակարգը, շահագրզոված են դյուզատնտեսության ու արդյունաբերության արագ զարգացումով ու բարձրացումով։

Հաջող պայքարի համար բանվորներին ու դյուզացիներին մի ամուր միության մեջ ձուլել կարողացավ մեր կոմունիստական կուսակցությունը՝ ընկ Լենինի ղեկավարությամբ։ Աշխատավորության բոլոր հեղափոխական շարժումների փորձը հաստատում է Լենինյան այն միտքը, թե առանց ամրակուռ ու միասնական կոմունիստական կուսակցության ղեկավարության, աշխատավորները չեն կարող հաղթանակել իրենց հզոր թշնամիներին։

4. Գյուզացիական մասսաները մենակ, առանց բանվոր դասակարգի ղեկավարության ու ողնության, չեյին կարող հաղթել թագավորին ու կալվածատերերին։ Գյուզացիական բազմաթիվ խլըռտումների ու ըմբռուտացումների փորձը ցույց է տվել, փոր այնակղ, ուր դյուզացիներին մենակ է յեղել, առանց բանվոր դասակարգի ոգնության ու ղեկավարության, ամենադաժան կերպով ճնշվել ե թագավորի ու կալվածատերերի կողմից։ Գյուզացիական մասսան իր ցըվածության ու տատանումների շնորհիվ չի կարողացել ինքնուրույն կերպով լուրջ գիմագրություն ցույց տալ ցարական-կալվածատիրական իշխանությանը։

«Գյուզացիները վոչ մի կերպ չեյին կարող

հասնել իրենց նպատակին, յեթե նրանք չունեցին բանվորներին, բանվորներն եւ իրենց հերթին չեցին հասնի իրենց նպատակին, յեթե իրենց ամրողջ ուժով չունեցին դյուզացիների պահանջները կատարելուն» (Բուխարին)։

Հաղթանակ տաներու և Խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար, հեղափախության ընթացքում անհրաժեշտ ե բանվոր դասակարգի ղեկավարությունը։ Բանվոր դասակարգը, չորհիվ այն հանգամանքին, վոր աշխատում և գործարաներում ու զավողներում, համախմբված ե, ավելի գիտակից, գրադեատ և յերկար տարիների հեղափախական պայքարի մեջ ավելի փորձագույն կուփած։

Յերբ ասում ենք բանվոր դասակարգի ու դյուզացիության միություն, զա չի նշանակում, թե բանվոր դասակարգը միանում է ամրողջ գյուղացիության հետ։ Գյուզացիությունը միատարր չէ։ Նրամեջ զանազան խավեր կան, վարոնք նայոծ պատմական շըջաններին, կարող են այս կամ այն դերը խաղալ։ Ներկա շըջանում կուսակցության 14-րդ համագումարը հետեւալ ձեռով բնորոշեց ղեղի գյուղի զանազան խավերն ունենալիք վերաբերմունքը։

«Յեթե չքավորությունը և ամենից առաջ բատրակները դյուզում հանդիսանում են պրոլետարիատի հենարանը, ապա միջակը հանդիսանում ե, և պետք է հանդիսանա նրա հզոր դաշնակիցը» (Կու-

Հակոբ թյուն 14-րդ համագումարի վորոշումներից):

Բայց միշտ ել այսպես չի յեղել:

«Ասած, յերբ մենք գեղի բուրժուական հեղափոխությունն ելինք գնում, յերբ մենք, բոյլշեպիկներս նոր ելինք փորձում գծել մեր վերաբերքունքը (առկտիկան) գյուղացիության նկատմամբ, լենինն առում եր, պետք է միանալ ամբողջ գյուղացիության հետ ընդգեմ թափառի ու կալվածատերի, չեզոքացնելով կագետական-բուրժուազիային: Այդ լոգունգով մենք գիմեցինք գեղի բուրժուական հեղափոխությունն ու հաղթահեցինք: Դա մեր հեղափոխության առաջին շընանին եր:

Հետագայում, յերբ մենք մոտեցանք յերկրորդ շրջանին, Հոկտեմբերին, լենինը ավեց նոր լոգունգ, վոր համագումարիանում եր նոր դրությանը. պրոլետարիատի միություն գյուղական չեավորության հետ, ընդգեմ բոլոր բուրժուաների, չեզոքացնելով միջակ գյուղացիությանը: Այդ լոգունգն անհրաժեշտ է իշխանություն ձեռք բերող կոմունիստական կուսակցությունների համար: Յեվնույնիսկ այն ժամանակ, յերբ նրանք վերցրել ենիշխանությունը, բայց դեռ չեն ամբապնդվել, եթի չեն կարող հույս գնել միջակ գյուղացիության գաշնակցության վրա: Միջակը, դա մի շրջահայց մարդ է, վոր սպասում ե հաղթանակողին և միայն այն ժամանակ է միանում

քեզ, յերբ դու հաղթություն ես տարել և դուքս քշել կալվածատերերին և բուրժուաներին: Հենց դրա համար ել նա միջակ է: Նշանակում է մեր հեղափոխության յերկրորդ շրջանում մենք առաջարել ելինք վոչ թե—բանվորների միությունն—ամբողջ գյուղացիության հետ լոգունգը, այլ—պրոլետարիատի միությունը չքավոր գյուղացիության հետ—լոգունգը» (Ստալին Համ. Կ. (բ.) կ. 14-րդ համագումարին տված քաղ. հաշվետվությունից):

5. Բանվոր գասակարգի առաջապահ գունդը կուսակցությունն և, «կուսակցությունը պիտի բանվոր գասակարգի առաջնորդը մինի, նա պիտի շատ ավելի հեռուն տեսնի, վորովհետեւ պիտի առաջնորդի պրոլետարիատին»:

«Բանվոր գասակարգը առանց հեղափոխական կուսակցության—դա մենույնն է, թե բանակն առանց կայազորի յե»: (Ստալին):

6. Ամբողջ աշխարհում բանվոր գասակարգն ու գյուղացիությունը ԽՍՀՄ-ի աշխատավորությունից սովորում են, թե ինչպես պիտի տապալել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը և առեղծել Խորհրդային իշխանություն: Բոլոր յերկրներում կան կոմունիստական կուսակցություններ, վորոնք լենինի պատղամներով համախմբում են աշխատավորությանը հեղափոխության համար:

9-ՐԴ ՆՅՈՒԹԻ ԼԵՆԻՆԸ ԲԱՆՎԱՐՈՒԷՇՈՒ ՅԵՎ,  
ԳԵՂՋԿՈՒԷՇՈՒ ՄԱՍԻՆ

ա) Ի՞նչ ե նշանակում ընկ. Լենինի լողունողը, թէ՝ առանց միլիոնավոր աշխատավոր կանանց մասնակցության չփ կարելի սոցիալիզմ կառուցել (բանվորուհին ու գեղջկուհին հակայական գեր են խաղում տնտեսության մեջ, նրանք կարող են և պետք են ուղարկի մեծ գեր խաղան և սոցիալիզմի կառուցման համար): Ամբողջ բանվոր դաստիարակին Լենինը մի խնդիր առաջադրեց—պայքարել կերպ ազատագրման հ. իրավունքների հավասարեցման համար:

բ) Կոմունիստական կուսակցությունն իրավուրծում ե իլլիչի պատգամները (կանանց մեջ տարվող հատուկ աշխատանքները, յերկրի հասարակական կյանքի մեջ քաշելը, բանվորուհուն ու գեղջկուհուն ազատազրող հիմնարկների շինարարություն):

գ) Կին-բաժիններն ու նրանց տարած աշխատանքը կանանց մեջ: Պատգամավարական ժողովը կոմունիզմի գործնական դպրոցն ե, սոցիալիստական շինարարության դպրոցն ե: Կուսակցության տեղական բջիջը զեկավարում ե պատգամավորական ժողովի աշխատանքները: Ի՞նչ նվաճումներ ե կատարել կուստիցությունը բանվորուհիների ու գեղջկուհիների մեջ տարած աշխատանքով: (Թվել-Պատգամավորուհին—գյուղում Լենինյան պատգամների առածողն ե):

դ) Աշխատավոր կանանց ծանր գրությունը կապիտալիստական յերկրներում: Բուրժուազիյան ցանկանում և վերականգնեցնել իր անտեսությունը բանվորների ու գյուղացիների հաշվին (գործազրկություն, գյուղացիության հարկերի բարձրացումը):

յե) Հեղափոխական շարժման աճումը կապիտալիստական յերկրների բանվորների ու գյուղացիների մեջ: Կոմունիստական կուսակցությունների ազգեցության աճումն աշխատավորության վրա: Կապիտալիստական յերկրների բանվորուհիներին հեղափոխական շարժման մեջ քաշելը:

զ) Կոմինտերնի գերի ու աշխատավոր մասսաների հեղափոխականացումը ԽՍՀՄ-ը բուրժուական հարձակումներից պաշտպանելու գործում:

9-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՏՔԵՐԸ

1. Ընկեր Լենինը հակայական նշանակություն եր տալիս աշխատավոր կնոջ մասնակցությանը՝ պետություն կատավարելու գործին: Լենինն ասում եր, վոր առանց բանվորուհու, վորը հակայական գեր և խաղում արդյունաբերության մեջ և կազմում և ամբողջ պրոլետարիատի մեկ քառորդ մասը, և առանց գեղջկուհիների, վորոնք պակաս գեր չեն խաղում գյուղատնտեսության մեջ,—անհնարին կլինի սոցիալիզմ կառուցել: Դեռևս հեղափոխությունից առաջ ընկ. Լենինը կուսակցության ու ամբողջ բանվոր դաստիարակին առաջադրում եր աշխատավոր

կոոջ հեղափոխական պայքարին մասնակցելու կարե-  
վորությունն և բանվորների ու գեղջկուհների իրա-  
վունքների հավասարության համար պայքարելու  
անհրաժեշտությունը։ Հոկտեմբերյան հազթանակը  
վերջ ուժեց կոոջ իրավունքների ամոթարեր անհա-  
վասարությանը։

2. Կուսակցությունն իրեն նպատակ և դրել  
պայքար մզել կոոջ իրավունքների փաստորեն հա-  
վասարեցման և բանվորուհուն ու գեղջկուհուն ազա-  
տագրելու համար։ Կոմ-կուսակցությունը իրակա-  
նացնում և իլիչի պատգամները և նկատի ունենա-  
լով բանվորուհների և գեղջկուհների հետամնա-  
ցությունն ու տգիտությունը, հատուկ աշխատանք  
և տանում նրանց յերկրի հասարակական կյանքի մեջ  
քաշելու ուղղությամբ և այնպիսի հաստատու-  
թյունների շինարարությամբ, վորոնք ակտագրում  
են բանվորուհուն և գեղջկուհուն կենցաղային խրն-  
ուգիրներում (մառեներ, կոնսուլտացիաներ, հասա-  
րակական ձաշարաններ և այլն)։

3. Կոմունիստական կուսակցությունը բան-  
վորուհների ու գեղջկուհների մեջ աշխատելու  
համար կուսակցության կոմիտեներին կից ստեղ-  
ծել և հատուկ բաժիններ—կին-բաժիններ, վորոնք  
խոշոր աշխատանք են տանում բանվորուհների ու  
գեղջկուհների մեջ։ Աշխատավոր կանաց մեջ աշ-  
խատանք տանելու հիմնական ձեր պատգամավորա-  
կան ժողովն և, վորոնք հանդիսանում են կոմունիզմի

դործնական դպրոցը և սոցիալիստական շինարարու-  
թյան դպրոցը։ Պատգամավորական ժողովներում  
բանվորուհներ ու գեղջկուհներ սովորում են լինել  
խորհրդային յերկրի ակտիվ շինարար։ Պատգամա-  
վորուհներ և ներկանի պատգամների տարածողն է։ Նա  
դործնականում կիրառում և կյանքում և ներկանի պատ-  
գամները և դրանով արգեն նպաստում և սոցիալիզմ  
կառուցելու գործին։ Պատգամավորական ժողովի  
աշխատանքները զեկավարում և կուսակցության  
ակադեմիչիցը։

4. Մինչ գեր մեզ մատ հոկայտական աշխատանք  
և տարգում աշխատավոր կանաց դրությունը լր-  
ացնելու ուղղությամբ, կապիսագիստական յերկր-  
ներում բանվորուհու և գեղջկուհու դրությունը  
զնարկ վատթարանում է։ Բուրժուազիան ցանկա-  
նում և ինչպես և լինելիք ձեռքում պահել իշխանու-  
թյունը և աշխատավորության վրա ավելի ու ավելի  
ձեռնում և գործ զնում, վորպեսզի բարձրացնի իր  
անտեսությունը։ Բորբ բորժուական յերկրներում  
իջեցնում են բանվորների ու բանվորուհների աշ-  
խատավարձը և ծանրացնում են պյուղացիության  
հարկերը։

5. Բորբ յերկրների կոմունիստական կուսակ-  
ցությունները, վոր համախմբված են կոմունիստա-  
կան ինտերնացիոնալի մեջ, աշխատանք են տանում  
բանվորներին ու բանվորուհներին կազմակերպե-  
լու, և բանվորագյուղացիական միություն կերտե-

լու, պայքարելով համայն աշխարհում խորհրդային իշխանություն ստեղծել: Աշխատավոր կանանց մեջ ևս խոշոր աշխատանք է տարվում: Մեր որբնակով կազմակերպվում են պատրամավորական ժողովներ: Մերթեր են հրատարակվում աշխատավորական համայնքամար:

6. Բանվոր զասակարգի հեղափախականացումը խանդաբառում և բորժուազիային բացահայտ կերպով հարձակվել խորհրդային յերկրի վրա: Մեր ուսհմանների վրա կանոնած և Խորհրդային պահանջր—բանվորագյուղացիական բանակը: Ամբողջ աշխարհի աշխատավորությունը բարեկամաբար ձեռք և մեկնում նրան:

#### 10-րդ ՆՅՈՒԹ: ԱՎՔԵ՞Ր ԵՆ ԿԱՄՑԵՐԻ ՏԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՆԻ ՊԻՌՆԵՐՆԵՐԸ

ա) Ինչպե՞ս եյին զասակարակվում գյուղացու յերեխանները, մանավանդ աղջիկները, ցարիզմի ժամանակ. (խավար, անգրագիտություն, յերկուզ կալվածաներից, ուրբագնիկից, յեկեղեցուց):

բ) Յերեխանների զասակարակությունը Խորհրդային իշխանության ժամանակ (նոր դպրոց, վորք նախապատրաստում և աղջիկներին ու աղաներին, սոցիալիստական պետական գիտակցական շինարարության համար):

Յերեխասարգական ու պատանեկական կազմակերպություններ:

գ) Կոմյերիտմիությունը փոխարինողներ և պատրաստում ներկայիս մարտիկներին ու Խորհրդային յերկերը կառուցողներին, այսինքն՝ կոմունիստական կուսակցությանը: Նա կուսակցության ու Խորհրդային իշխանության ակաբվ ողնականն և և պայքարողն է գյուղի նոր կուլտուրական շինարարության համար (հողի մշակման նոր ձեռքի անցնելը, պայքար անգրագիտություն գեմ և այլն): Կոմյերիտմիությունը պայքարողն է նոր կենցաղի (ծեծի, հայցոյանքի, հարբեցողության գեմ, յեկեղեցին գիտությունով փոխարինելու համար և այլն): Պատգամագործություն ինչպես պիտի ոգնի կոմյերիտմիությանը իր աշխատանքների ընթացքում (աղջիկներին կոմյերիտական շարժման մեջ քաշել, ոգնել ԿՅԵՄ-ի ձեռնարկություններին՝ և այլն): Կոմյերիտմիությունը լրացնում է մեր կարծիքը բանակի շարքերը, վորն արթուն ու աշարութիւնակի շաբաթերը, վորն արթուն ու աշարութիւնակի շաբաթերը, աղջիկների բոլոր նվաճումները:

դ) Դաստիարակությունն յերիտասարդական հասակից չպիտի սկսել յերեխանները իրենց ոմենափաքք հասակից պիտի ճիշտ հասարակական զատիարակություն ստանան: Յերեխանների համար այլպիսի կազմակերպություն է պիտներական կազմակերպությունը: Այսուղ նրանք վարժվում են ողպիւ ու աշխատել միատեղ, հետեւ առողջապահական կտնոններին, ընտանիքում ոգնական լինել

և վոչ թե բեռ։ Պատգամավորուժին պետք է ողնի պիտոներական կոյեկտիվների կազմակերպվելուն ու աշխատանքներին, պետք է աղջիկներին ուղարկի նրանց շարքերը։ Պիտոներներն ու կոմյերի համար աշխատավորների մի նոր սերտունդ կտան, վորոնք կարող կլինեն բարձրացնել տնտեսությունը և սոցիալիզմ կառուցել։

Վորագես գործնական հարց խորհուրդ է արդում գնել ԼԿՅԵՄ-ի բջջի քարտուղարի զեկուցումը, աղջիկների մեջ տարկող աշխատանիքի և գյուղի պատանեկան շարժման մասին ինչպես և պատգամավորութիւնի յելույթը ները։

## 10-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՏՔԵՐԸ

1. Գյուղացիների ու գեղջկուժիների անկույտութականությունը, նրանց անգրագիտությունը մեծ շտփով հետեւնք են ցարիզմի ժամանակաշարագրականության։ Գյուղացու յերեխաները մեծացել են անգրագետ գողալով կալվածատերների և ուրացնիկների առաջ ու անգիտակից վախ զգացել յեկեղեցուց։ Աղջիկները ծանր ստրկության մեջ են մեծացել նախ ծնողների ընտանիքում, ապա, ամուսնակալուց հետո ամուսնու տանը։

2. Խորհրդային իշխանության որով դպրոցն ու հասարակական գաստիարակությունն աղջիկներից ու աղաներից մեր յերկրում սոցիալիզմի գիտակից կառուցողներ են պատրաստում։ Այդ բանին ողնում

ունականում են յերիտասարդական ու պատանեկան կազմակերպությունները—կոմյերի համար թյունն ու պիտոներական կոլեկտիվները։

3. Գյուղում կոմյերի համար կուտիցության ակտիվ ողնականն է՝ գյուղի նոր, կուլտուրական շինուարության գործում։ Կոմյերի համար թյունը պայքար է մղում հողի մշակման նոր ձևերի անցներու և անգրագիտության վերացման համար։ Նոր պայքարում է ցարիզմից ժամանակություն մնացած վատ սովորությունների գեմ, այն է՝ հայնունիքի ու հարբեցողության և այլն։ Պայքարելով կրոնական նախապաշտառումների գեմ՝ կոմյերի համար թյունը յեկեղեցուն հակուլը ում և գիտությունը։ Պատգամավորուժին պիտի ողնի ԼԿՅԵՄ-ին նրա աշխատանքների բնթացքում։ Հատուկ ուշադրություն պիտի դարձնի աղջիկներին կոմյերի համար թյուն մեջ գրավելու վրա, հիշելով, վոր կոմյերի միությունը նախապատրաստում է նոր ու լավ աշխատավորներ, վորոնք կարող են կառուցել ու վերջացնել սոցիալիզմի կառուցման գործը։ Այդ նորերի, այդ փոխարինողների մեջ աշխատավոր կնոջ մասնակցությունն ամելի մեծ պիտի լինի քանի այժմս է։

4. Ավելի կարեռ է հասարակական ճիշտ գտառիքակություն տալ յերեխաներին դեռ շատ փոքր հասակից։ Այդ բանին ողնել կարող են պիտոներական կազմակերպությունները, վորոնց դեռ շատ

փոքր հասակից վարժեցնում են ապրել ու աշխատել միատեղ, իրենց կենցաղում հետեւ առողջապահական ու կուրսուրական կանոններին, և ընտանիքում ողնական լինել և վոչ թե բեռ: Պատգամավորուհին առաջինը պիտի լինի, վոր պիտի ուղարկի իր յերեխային պիտներական կազմակերպութան մեջ, մանավանդ աղջկանը: Գյուղացու յերեխաները վորքան մոտ լինեն կոմյերիտմիության ու պիտներական կազմակերպութուններին, այնքան աշխատավոր կանանց մեջ ավելի քիչ կլինի խավարն ու իրենց իրավունքները չհասկանալու յերկույթը:

#### 4-ՐԴ ՇՐՋԱՆ. ՆՈՐ ԿԵՆՑԱՂԸ ԳՅՈՒՂՈՒՄ

11-ՐԴ ՆՅՈՒԹ. ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԵՀԻՆ ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ ՀԻՄՆԱԴԻԲՆ Ե

ա) Տնակառությունն ու կենցաղը սերառեն կապված են իրար (ո՞ւմ ընտանիքում անկարգություն է, կեզտ ու հարբեցողություն, նրա դաշտային աշխատանքն ել վատ է): Տնակառությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է բարձրացնել առուտուրան, զրագիտության աստիճանը: Դաշտային աշխատանքներում պիտի մացնել արակտոր, կով կթելու լավ ձեեր մացնել, հավերին կերտկրել ու խնամել կանոնավոր և հետեւ ընտանիքի առողջությանն ու մաքրությանը:

բ) Պատգամավորուհին անակառության մեջ առաջին նորություն մացնողն է (Հող մշակելու, թու-

չուններին խնամելու նոր ձեերի կիրառելը, աշխատանքի մեքենայացումը և այլն): Պատգամավորուհին նոր կենցաղի առաջին ձեմքը դնողն է (պայքար հայնոյանքնի, հարբեցողության, ձեծի, կեղափի ու կրօնական նախապատշարումների գեմ): Պատգամավորուհին մայրության մանկության պաշտպանության խնդիրը գյուղում առաջադրողն է (մասրների, կոնսուլտացիայի, մանկական հրապարակների, պայքարելու յեպատագական գուշակությունների գեմ, տարածելու յեպատագական հուսագորություն), նա յերեխաների նոր ձեի գասակիրակության կիրառողն է (ծնողների ու յերեխաների հիշտ փոխհարաբերություններ, հասարակական գոտտիրակություն, պատանեկական շարժում): Պատգամավորուհին պիտի աջակցի գեղջկուհիների ինքնագործունեցությանը գյուղի նոր կենցաղի շինարարության գործում: Ի՞նչ և առել Լենինը նոր կենցաղի մտան:

գ) Գետության ոգնությունը գյուղի առողջացման գործում (Առժողկոմատի կարգադրությունը գյուղացիներին բժշկական ոգնություն ցույց տարու մտին, սանատորիաներ, մայրության և մանկության պաշտպանություն և այլն):

դ) Կամավոր ընկերություններ և պատգամավորուհիների մասնակցությունը նրանց մեջ («Կորչի անդրագիտությունը») ոգնում և անդրագիտության վերացման գործին:

Վորովես գործնական հարց խորհուրդ և տրբակում զնել գյուղի կողմէկոտիվ տնտեսության կամ արտելի ներկայացուցիչի հաշվետվությունը և արնակության վորեւ ճյուղի մեջ նոր ձևերի անցած պատգամավորություն յելույթը կամ մոր ու մանկան պաշտպանության, առողջապահության կամ դպրության մեջ աշխատող պատգամավորություն յելույթը:

### 11-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

1. Գրադեատ ու կուլտուրական մարզը հասկանում է, թե գյուղատնտեսության համար ինչ առավելություն ունի արականը, ինչքան ժամանակ և աշխատանք և տնտեսվում նրանով: Տնտեսության մյուս ճյուղերում ևս շատ նոր ձևեր կան, վորոնք աշխատանք ու ժամանակ են տնտեսում և գյուղացու անտեսության արդյունավետությունը ավելացնում: Յեթե հավերին ճիշտ ձեռվ խնամենք, նրանք ավելի շատ ձու կան: Կովի կանոնավոր կերակրելուց և մաքուր պահելուց կրաքարնանը նրա աված կաթի թե՛ վորակը և թե՛ քանակը: Յեթե բնակարանը (խրճիթը) մաքուր է, փոշի, ճանձեր, նամաճիճուներ ու այլ ջիջատներ չկան, այդուղ ապրողներն եւ առողջ են լինում, կարող, ավելի լավ աշխատել ու ավելի յերկար ապրել: Յերեխաներին ճիշտ խնամելու գեպքում նրանք ավելի առողջ են լինում, ավելի քեզ խնամք են պահպանում և այլն:

2. Պատգամավորուհին առաջին որինակ տվողը պիտի լինի, թե ինչպես պիտի անցնել տնտեսության լավագույն ձևերի (բազմազաշտ կարդին, տրակտորիզացիա, հողի պարարտացում և այլն): Նա իր անձնական կյանքումն ել պիտի որինակ դառնա մյուսներին: Պատգամավորուհին առաջինը պիտի լինի մսուրներ, հրապարակներ կազմակերպելիս: Նա պիտի պայքարի հարթեցողության, հայոցանքի ու պառավական գուշակությունների դեմ: Նրա խրճիթը ավելի մաքուր ու յերեխաներն ավելի առողջ պիտի լինեն:

3. Խորհրդային իշխանությունն ամեն կերպ աշխատում է, վոր բժշկության բոլոր ձևերից ողտավեն նաև գյուղացիները: Կա Առժողկոմատի կարգագրությունը, վորով առաջարկվում է գյուղացիներին ու ապահովագրվածներին հավասար իրավունքներ տալ, բժշկել չըջանային բժշկական հաստատություններում, ունենալ հատուկ սանատորիաներ գյուղացիների համար և այլն:

4. Յեթե գյուղում կա «կորչի անգրագիտությունը» ընկերություն, պատգամավորուհին ողնում է նրան, վորովհետեւ անզրագիտությունն ամենամեծ չարիքն է, վոր խանգարում է սոցիալիզմի կառուցմանը:

12-ՐԴ ՆՅՈՒԹ—ԳԵՂՋԿՈՒՀԻՆ, ԽՈՌՀՐԴԱՅՑԻՆ  
ԵՇԵԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ի՞նչո՞ւ գեղջկուհիները դյուզացիներից ա-  
վելի խավար և անգրագետ են: Յարիզմի ժամանակ  
ո՞վ կարող եր զբագետ, կամ բնուհանրապես կրթը-  
ված լինել. (կալվածտերերը, տերաերները, կու-  
րսկները, ռորդաբանատերերը): Յարիզմի որով գի-  
տությունը հարուստների սեփականությունն եր:  
Գեղջկուհու վերաբերմունքը գեպի գիտությունը—  
ցարիզմի որով (գեղջկուհուն պետք չեր զբագիտու-  
թյուն, նրա սահմանը չարքաշ չշխատանքն եր):

բ) ԽՍՀՄ-ում ժողովրդական կրթությունը քա-  
ղաքի ու գյուղի աշխատավորության սեփականու-  
թյունն ե: Կանանց կրթությունը Խորհրդային իշ-  
խանության ժամանակ (գեղջկուհիների հոսանքը  
գեպի գպրոցներն ու բարձրագույն գպրոցները, ըն-  
դունելության արտօնությունները, նախապարա-  
սական գպրոցներ բանֆակներին կից և այլն): Գեղջ-  
կուհին կրթության բոլոր աստիճանների վրա (լիկ-  
այաններում, ստորին գպրոցներում, բանֆակնե-  
րում, բարձրագույն գպրոցներում, գյուղատնտե-  
սական ճեմարաններում և այլն): Պատգամագորու-  
հին առաջինն ե անգրագիտության վերացման գոր-  
ծում: Գեղջկուհու ինքնագործունեյությունը գյու-  
ղում գպրոց բանալու և պահելու հարցում: Գեղջ-  
կուհու ժամանակությունը գպրացական խորհուրդ-

ներում: Խրճիթ-ընթերցարանը և պատգամագորու-  
հու մասնակցությունը նրա աշխատանքներին: Ի՞նչ  
ե ասել Լենինը ժողովրդական կրթության մասին:

զ) «Հայաստանի Աշխատավորուհի» թերթի  
նշանակությունը պատգամագորուհու համար: Լրա-  
գը երի, ամսաթերթերի, գրքերի նշանակությունը  
(բարձրացնում են գեղջկուհիների կուլտուրական ու  
հասարակական-քաղաքական մակարդակը): Խրճ-  
իթ-ընթերցարանի պատի լրագիրը և գեղջկուհի-  
ների մասնակցության անհրաժեշտությունը այդ  
լրագրին: Գյուղթղթակիցների շարժման նշանակու-  
թյունը գյուղի համար (պայքար չարաշահություն-  
ների, կուլակների դեմ, գյուղի կուլտուրական շի-  
նարարության լուսաբանումը): Պատգամագորու-  
հիներն ու գյուղթղթակիցական շարժումը:

Վորպիս գործնական հարց, խորհուրդ և արր-  
գում դնել գպրոցի կամ խրճիթ-ընթերցարանի վա-  
րիչի հաշվետվությունը և դպր խորհրդում, խրճ-  
իթ-ընթերցարանում, պատի լրագրում և լիկիա-  
յանում աշխատաղ պատգամագորուհիների յելույթ-  
ները:

### 12-ՐԴ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

1. Գեղջկուհիների տղիտությունն ու անգրա-  
գիտությունը բացատրվում և նրանով, վոր ցարից-  
մի ժամանակի կրթություն ստանալը մատչելի յեր  
համարյա բացատրվեա հարուստներին, կալվածա-

տերերին, տերտերներին, կուլակներին, գործարանատերերին ու վաճառականներին։ Նրանց յերեխաները վաղ մանկությունից մինչև բոլորովին հասունանալը սովորում ելին։ Գլխավորապես նրանցով ելին լցված բոլոր զպրոցական հաստատությունները։ Յարեղմի որով գյուղացիները չելին կարող զպրոց տալ իրենց յերեխաներին, վորովհետեւ անհրաժեշտ եր փող վճարել նրանց սովորելու համար, մյուս կողմից տնտեսության մեջ բանվորական ձեռքերի պահանջ ուներ։ Առանձնապես վատ եր աղջիկների կրթության գործը։ Գյուղում այն կարծիքը գոյաւթյուն ուներ, թե աղջկանը հարկավոր չէ դրագիտություն, վոր նրա բաժինն անդադար աշխատանքն է։ Մինչդեռ գեղջկուհու անգրագիտությունը խանգարել է ու այժմ ել խանգարում է նրան հիշտ կերպով տանել իր տնտեսությունը, դարձնել ամենի յեկամտարեր։ Խանգարում է նրան մասնակցել հասարակական-քաղաքական կյանքին, ոգտագործել իր իրավունքները։

2. 1917 թվի Հոկտեմբերին կալվածատիրական-բուրժուական իշխանության տապալումով գիտությունը դարձավ աշխատավորության—բանվորների ու գյուղացիների սեփականություն։ Խորհրդային իշխանության որով գեղջկուհին հնարավորություն ունի սովորելու բոլոր զպրոցներում, սկսած տարրականից և վերջացրած համալսարաններով։ Խորհրդային իշխանությունը հասունի ոգնություն է

յույց տալիս գեղջկուհուն, զպրոցներում բնդուներության լայն արտօնություններ ե տալիս։ Գեղջկուհու համար հիմնական խնդիր է հանդիսանում անգրագիտության ու կիսազբագիտության վերացումը։ Այդ բանում պատգամավորուհին որինակելի պիտի զառնա մյուսների համար։ Նա ինքը պիտի գեղջկուհիների մեջ զպրոցին ոժանդակելու ինքնողործումնեյություն արթնացնի։ Վորպիսզի զպրոցում աշխատանքը նորմալ բնթանա, վորպիսզի զպրոցն ապահովված լինի ամեն տեսակ անհրաժեշտ պիտույքներով, զասավանուլությունը հին ձեռվ չտարվի, — գեղջկուհին պիտի ակտիվ կերպով մասնակցի զպրոցական խորհրդի աշխատանքներին։ Գյուղում քաղլուսվարական աշխատանքի կենտրոնը խրճիթ-բնթերցարանն է։ Նրան կից լինում է անգրագիտության վերացման կայան, այնուզ միշտ ել գեղջկուհին կարող ե գտնել լրադիր, ամսաթերթ ու գիրք։

3. Գրքերը, լրագրներն ու ամսաթերթերը գեղջկուհու և գյուղացու համար հոկայական նշանակություն ունեն։ Նրանք հնարավորություն են տալիս գեղջկուհուն տեղեկություն ստանալ Խորհրդային իշխանության ու կոմունիստական կուսակցության ձեռք առած միջոցների մասին, գիտենալ, թե ինչպես պետք ե վարել անտեսությունը, նրանց բնթերցումը լայնացնում է գեղջկուհու մտքի հորիզոնը, նպաստում են նրա կուլտուրական-քաղաքական մա-

կռագակի բարձրացմանը: Բայց դրանից, գեղջկու-  
հու համար անհրաժեշտ գիրք ե նաև «Հայաստանի  
Աշխատավորուհին»: Գեղջկուհին վոչ միայն լրա-  
գրեր պիտի կարգա, այլ և պիտի գրի նրանց մեջ:  
Նա մտքերի փոխանակություն պիտի ունենա ուրիշ-  
ների հետ, խրճիթ-ընթերցարանի պատի լրագրում,  
ընդհանուր թերթում կամ «Հայաստանի Աշխատա-  
վորուհու» մեջ: Լրագրի միջոցով նա կարող է հաջո-  
ղությամբ պայքարել կուլտի գեմ, գյուղում կա-  
տարված չարաշահությունների գեմ, հարբեցողու-  
թյան գեմ: Լրագրում նա պիտի լուսարանի, թե  
ինչպես ե նորոգվում ու կառուցվում նոր գյուղը:  
Պատգամավորուհին գյուղթղթակիցների խմբակի  
մեջ առաջինը պիտի լինի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս ծրագիրն անցնելու համար զեկավարին,  
վորպես հիմնական ձեռնարկ կարող ե ծառայել  
«Կոմմունիստեա» ամսաթերթը, իսկ ուստաքամավու-  
րուհու և գեղջկուհու համար «Հայաստանի աշխա-  
տավորուհի» ամսաթերթը:

1-ին նյութի համար

1. ԱՏԱԼ. — Ի՞նչ սովորեցրեց Լենինը բանվորու-  
հուն ու գեղջկուհուն (մամուլի տակ և)  
Պետհրատ 1925թ.):

2. Ա. ԿԱԼԵՔԻՆԱ. — Բանվորուհու և գեղջկու-  
հու իրավունքը (թարգմանվում է).

3. ԳԱՂՊԱՐՈՎԱ. — Երեկոքի կանանց ազատագր-  
ումը.

2-րդ նյութի համար (Հրատ. «Աշխատանք և  
գիրք 1925թ.):

4. ԿԱԳԱՆՈՎԻՉ. — Գյուղխորհուրդը և գեղջկու-  
հին (թարգմանվում է)

5. Մ. ԿՈՒՅԲԻՇԵՎԱ. — Գյուղխորհուրդը և գեղջ-  
կուհին (Հրատ. Բանգեղջբաժնի).

6. Մ. ԿՈՒՅԲԻՇԵՎԱ. — Խորհրդային իշխանու-  
թյան աշխատանքը գյուղում և պատգա-  
մավորուհին (թարգմանվում ե ռուսե-  
րենից).

7. Կենտ. Կոմիտեյի և ԿՎՀ-ի Հուլիսյան վորումը («Պրավդա» № 165 3394 21 հուլիսի 1926թ.) :
- 3-րդ նյութի համար
8. Ֆ. ՆՈՒՐԻՆԱՆ.—Ճնշված ազգեր չկան Խ.Ս.Հ. Մ-ում (Հրատ. 1926թ. մամուլի տակ և)
- 4-րդ նյութի համար
9. Խ.Ս.Հ.Մ-ի Ներգործկոմի և ժողկոմի խորհի վորոշումը պետրյուջեցի մասին «Պրավդա» 1926թ. հուլիսի 7-ի № 53—39782) :
10. ՍԱԿԱԲՈՎ.—Տեղական խորհրդի գանձարկը և գեղջկուհին (մամուլի տակ և).
- 5-րդ նյութի համար
11. ԿՌԻԼՈՎ.—Գյուղատնտեսությունը և գեղջկուհին (թարգմանվում է).
- 6-րդ նյութի համար
12. ՄՏԱԼԻՆ.—14-րդ Կու. Համագումարում տված քաղաքական հաշվետվությունը (պետքանակում է).
- 7-րդ նյութի համար
13. 14-րդ Կուկոնֆերենցիայում Ռիկովի ղեկուցումը կոռպերացիայի մասին և ղեկուցման առթիվ հանված բանաձեռ:
14. Յ. ԿՐԱՎԵՆԿՈ.—Գեղջկուհին գյուղատնտեսական կոռպերացիայի ասպարեզում (Հրատ. «Կորչի անդրագիտ.» 1926թ. ոռուերեն) .

15. ՈՍՏՐՈՎՍԿԻԻ.—Ինչու համար գեղջկուհին մըսում ե կոռպերացիա: (Հրատ. հայկակի) .  
8-րդ նյութի համար
16. ՄՄԻԴԹՎԻԶ.—Ինչու համար և պետք բանվորուհու և գեղջկուհու շաղկապը (ոռուերեն).  
9-րդ նյութի համար
17. Ա. ԱՐՑՅՈՒԽԻՆԱՆ.—Կուսակցության հերթական խնդիրները կանանց մեջ տարվելիք աշխատանքների ասպարեզում (ոռուերեն).  
10-րդ և 11-րդ նյութերի համար
18. Ն. ԲՈՒԽԱՐԻՆ.—14-րդ Կուսամաղումարում կոմյերիտմիության մասին ղեկուցում (պետհրատ 1926թ.).
20. ՆՈՍՊՈՎ.—Կոմյերիտմիությունը և գեղջկուհի պատգամավորուհին. (մամուլի տակ և).
21. ՏԱՆՑԻԿ.—Պիոները և գեղջկուհին (մամուլի տակ և).
- Բացի վերոհիշյալ գրականությունից ողտպել կենտրոնական բանգեղջ. բաժնի հրատարակություններից ինչպես նաև Գրուուլից, վորն արդեն թարգմանված և և տուաջին մասը հրատարակված: (Պետհրատ):





ՀՀ Ազգային գրադարան



NL0238408

56.268

461

8M2